

ՄԱԿԱՎԱՐԺԱՆՈՅՑ

ՄԱԿԱՎԱՐԺԱՆՈՅՑ ԱՄՍԱԳԻՐ

1885. ՄԱՐՏ.

№ 2

Ա.ՊՐԻԼ. Բ. ՏՈՒԲ

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եթև.

1. Խմբ Մաղթանք (բանաստ.)	69
2. Կրթութեան քանի մի հեծնական հարցեր.	70
3. Խնչից օկտելու է կրօնի առաջին դասերը.	83
4. Մանկական խագեց	87
5. Մարզուանի Հայեցի բարզական վիճակը (Փոքր Ասիայում)	92
6. Ֆրանսիայի մանկավարժանոցների ներքին կազմակերպութիւնը	99
7. Մանկավարժ զօկտոր Կէռի մահ	105
8. Դարսական տօներ է Յիշատակ մեծամեծ ժարդիկների	108
9. Ժամանակ տնտեսելու սովորեցնելու է մանկութեանց	110
10. Ամէրիկական դպրոցաերի ծառերի օր Arboaday.	112
11. Ֆրանսիայի ազգային լուսաւորութեան առժեկան ելեւմսացոյց	114
12. Խմբազական Յիշատակարան	119
13. Խմբազրութեան պատասխաներ կազմի 2 երես. .	
14. Մանուցմոնք կազմի 3 և 4 երեսներում. .	

Ա Խ Ա Լ Յ Խ Ա

ՄԿՐՏԻՉ ԴԱՎԻԴ ԲՈՐԵԱՆԻ ՏՊԱՐԱՆ

1885

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ:

Նուաստ ինկրելու մեզ բազմաթիւ դիմողներին:
Եթէ ինմանալիք, թէ որքան ցաւ և վիշտ ենք զգում
միշտ թէ ձեր նաժա՞ներ ստանալիս և թէ ուս
բռպէիս, որ չենք կարօղանում ձեր խնդիրը կատա-
րել—ձեզ օգնենալ, եւ պահանջանքը, կարծես ան-
սիրտ եւ ան

Սահմանադաշտանոցի
խալցեայութ,
զարծանոցն իւր
վճար բաժան
գիրներ ունեն
քերը, մենք
դեցող դավեն,
կօշիկներ, գո

Թողնենք մ
չեն միշտ: Աորա հատ նոյեալէս պարտք ենք համարում
արտաքուստ մեզ դիմողներից գոնէ մին—երկուսին
բաւականացնել, իսկ առաւել շատերին անբաղա-
բար բացասել: Մեզ դիմողները թող համոզված լի-
նին, որ եթէ որեացէ Հայոց ունենալինք, երբէք չէս
մերժվի նոց խնդիրը:

395



սմբ բացասել:
ո աշխարհան Ա-
Ճ: Բացի Սահ-
մանի մի որդե-
ամենայն պէտ-
քումենք 40 եր-
, համագգեստ,
գրքեր եւալն:
, որոնք պակաս

ՄԵՆԿԱՎԱՐԺԱՆԱՑ

ՄՈՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

Խւրաքանչիւր տետրը 2

Հասցեն. Ախալցիք.

Թէրթ: Երկու ամիս 1. տետր:

Պետական ՄԱԿԱՎԱՐԺԱ-

Տարեկան գի՞նը 3 մաս,

ԽՈՇ.

1885. ՄՈՒՏ. № 2

Ա.ՊՐԻԼ. Բ. ՏԱՐԻ

Faisons notre devoir, (ՄԵՆ. մեր սպազքը կատարենք,
լե րես էստ վանիտե. մնացածն ունայնութիւն է:)

Ի Մ Մ Ո Ղ Թ Ա Ն Ք:

Մեծ սլասի օրեր անցան գընացին,
Եւ կատարելու վսեմ տօն գատկին,
Նոյն սովորական աղմուկ և շարժում,
Նոյն ունալն կեանքի հոգսեր ենք տեսնում:

Եւ միշտ միևնոյն.... Նոյն օր և նոյն ժամ,
Տաճարն հաւաքված, նոյնպէս այս անգամ,
Կշնորհաւորեն տօն, միմեանց աւալով
Յուդայի համբոյը, Քրիստոս կոչելով...
,,Աղջլեր, վարդապետ...,,Ա՝ ինոյն ծէս. .Լոկ ծէս..
Ամենալն տարի, դարեր միապէս....

Եւ երբ ամեն տեղ կսկսեն կրկնել
Քրիստոս յարեաւ խօսք,-կցանկամմաղթել.
Յարութիւն արա դու մեր մէջ, ով ծէր,
Կինդանացըու մեղ և մեռած խիղճ մեր...

ԻՇԽԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ:

Յօդուածովս երկու նպատակ ունիմ. 1) ցոյց տալ
որ մեր մանուկների կրթութեան գործը շատ կա-
ղումէ և 2) մի քանի խորհրդածութիւններ անել,
թէ ինչ ձանապարհով ընթանալու է կրթութեան
գործի մէջ:

Մանուկն ըէ մորհով և ըէ հոգով տառիտոքէլի վերպով և ասորի-
մանաբար է պարփառաւ: Առաջնի ապացոյց է այն հան-
գամանքը, որ ծնողները զարժանումէն, եցր տես-
նումեն փոքր մանուկներին յանկարծ մեծ մարդ
դարձած, իսկ երկրորդի ապացոյց այն է, որ 6—7
տարեկան մանուկը չէ կարող հասկանալ իւր յարա-
բերութիւնը դէսի երկիրը, և երկրի յարաբերու-
թիւնը դէսի մոլորակները և արեգակը:

Սական մարդի մէջ որոշումենք երեք հասակ,
որոնցից իւրաքանչյւրն ունի իւր բնաւորանիշ յատ-
կութիւնները, և ամենայն մարդ պիտի ապրի այդ
երեք հասակով, հակառակ դէսկում նա կվնասվի:
Այդ 3 հասակներն են. 1) մանկական, 2) երիտա-
սարդական և 3) այրտկան:

1). Մանկական հասակ: Մանուկն իւրաքի տառաջին օրեւ-
րում ապրում միայն ներայան, նա չունի անցեալ և չէ
հետաքրքրվում ապագայով: Եթէ նա քաղցած է,
պէտքէ իսկոյն յագեցնել նորան, և ոչ հանդարտե-
ցնել ապագայ խոստմունքով, ապա թէ ոչ կախէ
լալ և աղաղակել: Հետզհետէ նա ունենումէ ան-
ցեալ իեանք, ովի հիման վերա գաղտիար է կազ-
մում ապագայի մասին և սկսվումէ նորա հոգու
ինքնուրոյն գործունէութիւնը: Մանուկի անցեալ

կեանքը ևս անուանումէմ «պաշար»։ Այս հիմամբ
կարելի է բացատրել մանուկի՝ յազարերութիւնը դէս
ափ արտաքին աշխարհը և նորա մտաւոր հօրիդօնը։

Մասսակը յարաբերութեանը դէռի արդաքն աշխարհը էրտարբա-
խն է, այսինքն նա բնութենից ամենայն տալաւորու-
թիւն ստանումէ լուսանկարի ազակու նման, ա-
ռանց իւր կողմից որի. է հոգեկան գործունէութիւն
արտայտուելու, և շատ բնական է, որովհետեւ նա
չունի այնքան «պաշար», որ նոր տալաւորութիւնները
համեմատէ հների հետ և ընդհանրացնէ։ Մասսակը
հոգաց հօրինքն նեռ է, որովհետեւ նա բազկանումէ մի-
այն այն բաներից, լնչոր մանուկի առաջ գտնվումէն։

Որովհետեւ մանուկի պաշարը մեծ չէ, որի հե-
մոմբ կատարվէր որի. է հոգեկան գործունէութիւն
(համեմատութիւն, ընդհանրացումն), այդ պատճա-
ռով մանուկի յիշողութիւնը չափազանց սուը է, իսկ
առաջբարեանը Պետք տառագ «արձանն և անդառն է»։ Եթզ
հետզհետէ մանուկի մէջ աւելանումէ պաշարը,
այն ժամանակ թուլանումէ նորա կըստորականու-
թիւնը և լիովութեան գործութիւնը և գարզանումէն
նորա մէջ նոր ընդունակութիւններ—համեմատութեան
և ընդհանրացումն։

2) Երեսասարպական հառակի։ Այս հասակում թէն
մանուկը գտրձեալ տալրումէ ներկայով, բայց ներկայով
աղողէն տառձ, պայեսամէ տղոդոս։ Նորա ոլաշարը ար-
դէն թոյզ է տալիս առաջակի մասին գաղափարը
կազմելու և նորան ձգտելու, բայց որովհետեւ ա-
պազան աւելի հրապուրիչ է թուռում քանթէ է իս-
կապէս և շատ դժուարութիւններ է ներկայացնում,
այդ պատճառով՝ երիտասարդը շատ անգում սիսալ-

նեղի մէջ է ընկնում, բայց այդ սխալները անհարժեշտ են և առելի են նովորեցնում մարզիս քանթի որևէ է ուրիշ մի բան։

Ասում են. « Այս մարզը մեծ վկինի այրական հասակում, ուշ որ սխալներ չեն աշել մանկութեան ժամանակ»։

3) Այրական հասակ։ Այս հասակում մարդս ձեռք է բերում ուսմամբ և փորձով կատարեալ պաշար, ուրեմն և կատարեալ գտղափար սպագալի մասին։ Այս ժամանակ մարդի կեանք շատ թոյլ է կապված ներկայի հետ, նա գլխաւորապէս տպում մէ ապագայով։ աղաքան է ուղղութիւն դաշիս ներկոյ հետաձն։

Իսկ ինչ որ վերաբերվումէ ծերութեան հասակին, դա նախագուշակ է մահի, որովհետեւ այդ հասակում համարեա բոլորովին կարվումէ ծերունու կեանքը արտաքին աշխարհի տպաւորութիւններից, նա չէ հետևքը քրքրվում ներկայով, ուրեմն չունի և որպէս սպագայ կեանքի համար, նոր գործարանները լուսանուած են և վրշապէս հանգչուած։

Աչքի առաջ ունենալով մարդի հոգեկան գարդացման այս ընդհանութ նկարազրութիւնը, մենք կարող ենք բացատրել անուկների զանազան յատկութիւններ։

ա) Գիւրաշարժութիւն։ Մանուկը երկար ժամանակ չէ կարող իւր ուշադրութիւնը կեղրոնացնել մի առարկայի վերա, այդ սրմտճառով նա գիւրաշարժ է կըակու է։

բ) Բարկութիւն։ Մանուկը չում է բարկանում նորա համար, որ իսկոյն չենք կատարում նորացանկութիւնները, այլ ուշացնուամենք, մինչդեռ նո

Ապպումէ միտյն ներկայով և պարզ կազմակիար չունի ապագայի ժաման, նոյն հիմանը շռւա է անցնում նորա բարկութիւնը, եցք նորա ցանկութիւնները խկոյն կատարումնենք:

գ) Խսականութիւն: Մանուկի Խսականութիւնը շատ բնական է: Նեղ մտաւոց հօրիզոն ունենալով, նա կարծումէ, որ ամենայն բան լիւան համար է ստեղծված, մինչև անդամ մօրը համարելով իւր սեփականութիւնը, չէ կամենում, ոչ նա ժափա անդամ ցոյց տայ ուրիշներին: Ասումեն, որ մանուկը բարի է, ոտ դարձեալ հետևանք է նորա Խսականութեան: Որինակ, Ճանապարհին նա տեսնումէ մի խեղճ կատու. և իրը բարեսրութեամբ տանումէ տուն, ինկ թէ նա Խսականութենից դրվագած տարաւ տուն և ոչ բարութենից, երեսումէ նորանից, որ երբ կատուն այլ ևս նորան չէ գուարճացնում և չէ հետաքրքրում, նա անինամ է լժողնում կատուին, մինչև անդամ դարձեալ դուրս չ ձգում:

դ) Խսուութիւն: Մանուկը խիստ է վաշվում շների, կատուների, թիթեռներիների հետ և այլն, և նոցա տանջումէ: Խորա պատճառն այն չէ, ոչ մանուկը ցանկանումէ զուարճանալ նոցա տանջանքով, այլ եսականութիւն է, և այդ բանը կատարվումէ անգիտակցաբար: Անելով եսական, նա կարծումէ, թէ իբրուունք ունի նոցա հետ ամին բան անելու, մանաւանդ որ նոցա տանջանքը իրան գուարճութիւն է պատճառում: Ծնողները խօսքով համոզումեն մանաւիկն, որ կենդանիներին չչարչաքէ, բայց նա գործով շարունակումէ, որովհետեւ ասլրումէ միայն ներկայով, իսկ ներկան նորան

զուարձութիւն է պատճառում։ Այս դեպքում առևլորդ է ծնօղնեցի պատիժը։

ե) Նախանձ։ Սա ևս հետեանք է եսականութեան։ Մանուկը սկսումէ նախանձել, եթք տեսնումէ, որ մարդը խօսումէ ուրիշների հետ, որովհետեւ նորա կարծելով, մայսը իրաւունք չունի ուրիշների հետ խօսելու։

գ. է) Եսականութեան հետեանք է, որ մանուկը չունի գաղափար սեփականութեան և գողութեան մասին։

ը) Անհօգութիւն։ Մանուկը ապլելով միայն ներկայով, բնականարար անհոգ կլինի ապագայի մասին։

թ) Պարզութիւն։ Մեր հոգեկան դըութիւնը ուրիշին արտայացնելով մի պահանջ է, որով մեծերս, փորձգած լինելով, երբեմն այն չենք տառմ, ինչ որ մեր մէջ կայ, իսկ մանուկը չունի փորձ, ուստի և բաց է անում իւր հոգեկան աշխարհ։

ժ) Բարցականութիւն։ Մանուկը գործումէ շահասիրական ահսատիչութեց, այսինքն նորա բոլոր գործերին այն օգտով կամ մնասով, որ հետեանք են նորա գործերի։ Մանուկը միշտ աշխատումէ յազուտ իւր գործել։ Քուն մտքով բարցականութիւն չէ կարելի պահանջել նորանից, որովհետեւ դա կզարգանաւ նորա մէջ միայն այն ժամանակ, եթք կզարդանան հոգու միւս կողմերը, եթք ժամանուկը պաշարով հարստանալով և իւր նեղ մտաւոր հօրիզոնը ընդարձակելով, կհասկանայ, որ նա ապրումէ շատ մարզիկնեցի և ամբողջ մարդկութեան հետ, ուրիշ խօսքերով, եթք նորա շահերը կընդհարվին միւսների շահերի հետ և նա կըմբռնէ,

թէ չէ կարելի ամեն բան չափել այն չափով, որ
ըստ չափումէք: Այս հիմամբ դժուար է հաւատալ
որ ծնօղները կարողանան բարուական ձշմարտու-
թիւններ սերմանել մանուկի մէջ, այն ևս պատիժ-
ներով, որոնք աւելի ատելովմիւն կզարթեցնեն
մանուկի մէջ գէափ բարուական ձշմարտութիւնները:

Ժարցասիրութիւն: Մանուկի հարցասիրու-
թիւնը շատ բնական է: Աշխարհ զալով, նորա հա-
մար ամեն բան նոր է, նա կամենումէ ամեն բան ի-
նանալ, մտաւորապէս զարգանալ, ինչպէս որ զար-
գանումէ Փեղեքապէս, այդ պատճառով նա զանա-
գան հարցմունք է անում և թէև նորա հարցերը ան-
կապ են և չէ աշխատում ամեն բանի բացատրու-
թիւնը իմանալ, այնու ամենալայնիւ չէ կարելի միայն
այդ հիմամբ նորա հարցասիրութիւնը անօգուտ հա-
մարել նորա հոգեկան զարգացման համար, որով-
հետև մեծ պաշար չունենալով, չէ կարող բացա-
տրութիւնները մեծ մասը հասկանալ, մանաւանդ
որ նորա ուշադրութիւնը կարճատել է և անկայուն:
Ընդհակառակն կըթութեան գլխաւոր խնդիրներից
մէկն է, բաւականութիւն տալ մանուկի հարցա-
սիրութեան և օգուաէս կերպով գործադրել նորան:

Նկարագրելով մարզի հոգեկան զարգացման հա-
նապարհը, աչքի առաջ չունեցայ երկու կէտ, որոնց
պատճառով մանուկները տարբերվումեն միմեան-
ցեց, այսինքն այն մթնոլորդը, որի մէջ ապրումեն
նոքա և ժառանգականութեան օրէնքը, որովհետեւ
ընդհանրապէս առնելով, Եւբաքանչիւց կանոնաբար
զարգացող մանուկի պիտի ունենալ վեցոյինեալ ընդ-
հանուր յատկութիւնները և մենք սկսուինք

մանուկներին, այդ յատկութեանները աչքի պոռէ
ունինալով, հակառակ դէպքում կվնասենք նոցա
թէ Փիզեքտապէս, թէ մտադորապէս և թէ բարոյա-
ոլէս:

Յաւոլ սրտեւ պիտի խոստովանենք, որ մենք,
ձիշդն ասած, տմենեին չենք մտածում մեր մա-
նուկների կրթութեան վերա: Մեր հայրերը և հայ-
րերը լրջօրէն խօսումեն միայն թատրոնների և
խնջոյքների վերա, այլև թէ լինչպէս է կարգած
Գ-ի շորը, թնչակէս անձաշակ էր օր. Հ-ի հագուստը
և այլն, իսկ կրթութեան գործում ծնօղները լուրջ
են լինում միայն այն ժամանակ, երբ մանուկին
պիտի պատժեն և ծեծեն:

Հետաքսքիր է միայ կողմից քննել թէ լինչպէս
են պատրաստվում մանուկներին կրթելու համար
մեր տաք գլուխ երիտասարդներն և անմեղ օրի-
որդները, որոնք ապագայում հայր և մայր են լինելու:

Առաջին նուագում այս հարցը փոքր ինչ անբնա-
կան է թուում, որովհետեւ կարող են ասել. միթէ
կարող է գեղեցիկ, սիրավիր և ճարապիկ երիտասարդը
լրջօրէն զբաղել մանուկների կրթութեան խնդիր-
ներով: Ի՞նչ են մանուկները և լինչ են կամենում
նոքա: Եթէ կայ կարողութիւն, նոցա կուտեցնեն և
կհագցնեն: Եթէ նոքա աղաղակեն, կտանեն հեռու,
մանկանոց, որ շլափի նոցա ձայնը: Եթէ այնտեղց
ևս լսիլի, կպատժեն: Այստեղ մտածելու և սովորե-
լու ինչ կայ:

Նոյնքան անքնական է պահանջել, որ վերոյի-
շեալ ինքիրներով զբաղեն մեր քնքուց էակներ,
օրեսուղները, որոնց համար ոչինչ կուպիտ և երկրա-

որ բան չկայ, այլ կան միտին թատրոններ, խնջուքներ, պարեր և քաղցր խօսակցութիւններ։ Կրթութեան գործի վերա այս տեսակ հայեացք ունենալով, քնքոյշ էակը, երբ մար է դառնում, չգիտէ ինչ անէ անօգնական մանուկի հետ. կամ ինքն է կրթում, ըստ իր հոգեկան տրամադրութեան, երբեմն չափազանց գորովելով, երբեմն շընչին բանի համար ծեծելով և գոչելով, և կամ յանձնումէ նորան ծառաների լիազօր հոգատարութեան, որոնք և կրթումեն նորան։

Ինձ և հարկէ կառարկեն թէ խօսքերիս մէջ շատ չափազանցութիւններ կան, թէ մայրը տղային երբէք չար չի ցանկանայ, թէ նա սիրումէ նորան։ Նատ Ճշմարիտ է, բայց միթէ չեն հետեւում և սիրող մայրերը այն կրթութեանը, որի մէջ ծեծը նշանաւոր դեր է խաղում։ Սորան ապացոյց է մեր ամենօրեայ փորձը։ Հաստատ կարելի է ասել, որ մեղանում մանուկի վզակոթին հասցնել, գոչել բարկանալ նորա վերա առանց պատճառի, ամեն քայլափոխում պատահող փաստեր են, որի վերա մեղանից մէկը հազիւ թէ լուրջ ուշք է դարձնում գոնէ հեռուց։

Այժմ հարցնենք թէ ինչպէս է զարգանում մանուկի հոգին այսպիսի պայմանների մէջ։

Նախ և առաջ առաջ կրերեմ թէ ծնօղները թիւն տեսակ յարարելութիւններ ունին դէպի իրանց մանուկները։

1) Մեր քանի ծնօղներ աշխատումեն իրանց մանուկներից պատրաստել հասակաւորի այս կամ այն տիսլը։

2) Միւսները ամենելին աշքի առաջ չունին որևէ որոշ նպատակ, այլ գործումեն ամեն անգամ՝ իրանց հոգեկան տրամադրութեան համաձայն և այս տեսակ կրթութիւնը ամենից շատ է տարածված:

Առաջին կարգի ծնօղները աշխատումեն իրանց մանուկներից պատրաստել հլու, հնազանդ և սիրող որդիներ և կամ քաղաքավարներ և բարեկալել մարդկեւ:

Մի քանի ծնօղներ աշխատումեն կանոնաւորել մանուկների յարաբերութիւնները դէսի իրանց, միւսները դէսի ուղիչները: Առաջին տեսակ ծնօղների գլխաւոր պահանջն այնէ, որ մանուկները մեծերի առաջ լինին Աստուծու գառն, հլու, հնազանդ և սիրող որդի, և այս նպատակին համեմու ամենագլխաւոր միջոց համարումեն պատժի երկիւղը, ծեծը և ձնշումն, որ եւ չափազանց վնասումէ մանուկներին, որովհիետեւ սորա ապրումեն շատ զըսպահ կած, ոչ թէ հասկանալով նորա օգուտը, այլ պատժի երկիւղից և նոցա մէջ գարգանումէ միայն երկիւղ դէսի ծնօղները և ոչ անկեղծ սէր: Բացի սորանից մանուկները սիրումեն ազատութիւն, բայց որովհիետեւ ծնօղները խլումեն նոցա ազատութիւնը, շատ անգամ ևս ծեծումեն, այդ սկառճառով նոցա մէջ զարգանումէ ատէլութիւն դէսի ծնօղները և շաբախնդական զգացմունքը: Բայց մանուկները ոչինչ չեն կարող անել ծնօղներին, որովհիետեւ նոցանից վախենումեն, այդ պատճառով իրանց չարախնդական զգացմունքը թափումեն փոքր եղբայրների, քուերի և կենդանիների վերա: Այլև մանուկները սիրումեն խաղալ, բայց ծնօղների և մե-

Տերի առաջ նոքա սլիտի լինեն հլու, Հանգարտ,
այդ սբատմառով նոքա երեսումեն այդ բառկութիւն-
ներով միայն մեծերի առաջ, ինկ երբ մեծերը հե-
ռանումեն, այն ժամանակ մանուկները սկսումեն
տպսել լրանց բնական կեանքով, սօբա հետեանքն
այն է, որ մանուկները սպառումեն կեղծել, սուտ
խօսել և խարել:

Ծնօղները ոշխատումեն սերմանել մանուկների
մէջ բացուակն սկզբունքներ, այն ևս պատմի Եր-
կիւզով և Ճաղկածեծով, որը բոլորովին հակառակ է
բաշուականութեան և որը այնքան վաստ ազգե-
ցութիւն է թողնում մանուկների վերա, որ նոքա ըս-
կսումեն առել բարօւական սկզբունքները և շատ
անգամ նոցու հակառակ գործել:

Ճեշելով մանուկնեն, ծնօղները կաղացեցնումեն
նորա Հոգեկան զարգացման կանոնաւոր ընթացքը,
նորու մէջ սկսումեն զարգանալ միայն յած յատ-
կութիւնները և բնապպանքը, որոնք եշանեն հաշմ-
անգամութեան և այս կետնքով մանուկը շարու-
նակումէ առըել, մինչի կմենակ հարը: Նորա մեռ-
նելուց յետոյ մատուկը արդէն երիտասարդ դար-
ձած, լրան աղասի է զգում և անձնատուք է լի-
նում խնջուքներին և կատաղի խրախճաններին.
Այս կուռումէ, հայհոյումէ և ամեն բան ոշնչացնումէ:
Ծնօղները կըթել են նորան բռնակարար, և նախ-
կին սորուկը զարձել է բռնակալ: Մեկնուն կեր-
պով է վարվում նա իր մանուկների հետ և միե-
նոյն լրողութիւնները միշտ կրկնվումեն: Ահա մի-
քանի ծնօղների կըթելը եան եղանակը, Դառ-
նանք միան կղանակին: Ասի ծնօղներ, որոնք ուշ-

Խատումեն պատրաստել իրանց մանուկներից բառեկիրթ և բարեվայել մարդեկ։ Նոցա հասկացողութեամբ բարեվայել նշանակումէ այն, որ մանուկը աղջուկ չբարձրացնէ, չաղաղակէ, այլ հանդարտ խօսէ մեծերի նման, ձեռները ոտները չշարժէ, գլուխը թափ չտայ և այլն, մի խօսքով նապիտի պահէ իրան հասակաւորի նման։

Այս տեսակ կը թութեան մասին գաղափար տալու համար առաջ կրերենք մե Գէորգ Թէ ինչպէս հայրը կը թումէը իւր որդուն։ Հայրը ընտանիքով նստած են ճաշե, մանուկի անունն է Գէորգ։ Հայրն ասումէ. «Գէորգ, ձեռներդ»։ «Գէորգ, մի շարժեր», «Գէորգ, այդպէս չէ կարելի նայել»։ «Գէորգ, լնչպէս ես բռնած դանակդ և այլն»։ Այսպիսի շարունակ ճշնշմամբ մանուկներին զբկումեն կանոնաւոր կեանքեց, նոքա կորցնումեն այն առնենն, ինչ որ մանկական է, կենդանութիւն շարժմունքի մէջ, բարձր ձայն, սէր դէպի խաղերը, հարցասիրութիւնն, պայտ զասիրութիւն և ալլն։

Թէ որ աստիճան ծնողները չեն ճանաչում մանուկի հողին, ցոյց է տալիս այն, որ շատ անգամ ծնողների սէրը աւելի վնաս է բերում մանուկին, քան թէ օգուտ. Յայտնի է, որ համարեա ամեն ընտանիքում կայ մի սիրելի։ Նատ պատճառներ կան այդ երեսոյթի առաջանալուն, բայց ամենագլխաւորը նոյն ինքն ծնողների մտքի և զգացմունքի խանգարումն է։ Ծնողները շատ բան չեն թոյլատրում մանուկներին, ինչոր թոյլատրվումէ հասակաւորներին և շատ բնական է, բայց թոյլ չտալ մեծ մանուկին այն, ինչ որ թոյլ է տրվում փոքրին,

և կամ մեծին պատժել որևէ ջնդին բանի համար, իսկ փոքրին թոյլ տալ այդ բանը, նշանակումնէ խանգարյած միտք և զգացմունք ունենալ և անարդար կերպով վարդել մանուկների հետ. հետեւ անքը այն է լինում, որ «սիրելիները» հասկանում են այն առաւելութիւնը, որ ցոյց են տալիս ծնօղները նոցա միւսների առաջ և ըմբռնելով ծնօղների թոյլ կողմը, նոքա հարկաւոր գէպքում միշտ ողտավամեն գորանից, այսինքն լացով, կիղծելով և հիւանդ ձևանարով նոքա ամեն բան ձեռք են բերում և աշխատումեն միշտ երանց խօսքը անելու Ալսպիսի բնաւորութեան գարզանալուն նպաստումէ այն հանգամանքը, որ ծնօղների աչքերը միշտ սիրելիների վերա են և մենք փորձով գիտենք, որ սիրելիները տպագայում առելի վատթար և սառնասիրու մարդեկի են զուրս գալիս, քան թէ այն մանուկները, որոնք սիրելի չեն համարյած և ծնօղների հակողութիւնը միշտ չէ եղած նոցա վերա:

Ուրեմն եթէ ծնօղը անսահման սէց ունի գէպէ եւր մանուկները, բայց այդ սէրը գիտակցական չէ, և նա չէ ճանաչում մանուկի հոգին, այն ժամանակ նորա սէրը վնաս կրերէ մանուկներին և ամենազարհուրելի պատիժ մարդկութեանը, որպիսին կարող է հասցնել միայն չար և դժոխալին ողին:

Սկզբնական ուսուցումը նոյնչափ աննախանձելի պրութեան մէջ է գտնվում, որպատի և կոթութենք: Սորա ապացոյց կարող է լինել այն հանգամանքը, որ ծնօղները մանուկի հարցասիրութեանը նայումն թեթև աշքով, իբրև անօգուտ բանին, մինչդեռ դա մանուկի սլահանջն է և զարգացման

դիմաւոր միջոցներից մին, որովհետեւ իւր հարցաւոխ րութեամբ նա միշտ ձգտումէ հասկանալու բնութեան երեսըմները, ոչը (քնութիւնը) ոչ մէսայն տալիս է մանուկին գիտութիւն, այլ միեւնոյն ժամանակ զարգացնումէ նորա միտքը, զգայացանները և սովորեցնումէ ամեն բան պիտել:

Այժմ կտրելի է հացնել, թէ բնութեան տեղ ծնօվները թիւ աղքիւր են ցոյց տալիս մանուկին հոգու մկրտնական զարգացման համար: Նորա մի աշակերտ զարգացման են կազմել, մենք կարող ենք զարգանալ գրեթով, ուրեմն ակտաքէ կարգալ գետենու: Հետեւաբար մանուկին հոգեկան զարգացման համար անհրաժեշտ է, որ նա կաշողալ գիտենալ: Այ ծնօվները ամեն եռանդով աշխատումեն այդ բանի համար, առանց միւս կորմից հասկանալու մանուկին հոգին: Օքինակով պարզենք:

Վե տղիւր մայր աշխատաւմէ հասկացնել իւր մանուկին, թէ նա խոզարած կզառնայ, եթէ նիշտ շկարգաց, այս ստումէ և հեռանումէ մանուկից: Գալիս է մանուկի մեծ եղբայրը, միեւնոյն բանն է անդում և դարձեալ հեռանեմ: Մանուկը թէ է պրաշտ իւր առաջն խաղալիքով, առաջ և չէ պարտազում, նորա խելքն ու միտքը խաղալիքի հետ են, այսպէս անցնումեն նոյս օդերը առանց մոքիցն անզամ անցնելու, թէ նա խոզարած կզառնայ: Կամ թէ ուստից մանուկի հոգեկան զարգացումն առ քի առաջ ամենալու, տալիս են նորան նարեկ, կոտուկուման և ուրիշ զժուարիմասու գըքիս: Այսպիսի միջոցներով մանուկներին հասցնումեն բարուական մանջանիք, որի վերա աւելանումէ և ծեծը

այն թեթեւամիտ համոզմամբ թէ «ուսումն գառն
է, իսկ պառուղ քաղցր»:

Պառուղն այն է լինում ինչօր վայելումէնք:

Մ. Ա.

ԽՆՁԻՑ ՍԿԾԵԼՈՒ Է ԿՐՈՆԻ ԱՌԱՋԻՆԻ ԴԱՍԵՐԸ:

Գալրոց մտնելիս մանուկները մեծ մասամբ շատ
թոյլ գաղափարներ ունին Աստուծու մասին: Այս
գաղափարներն անորոշ, լուսութ, անձիշդ, իրբեմն
ևս սնոտիսապաշտ են: Սիսալված չեմ լինի, եթէ
ասեմ, որ մանուկներն ունին ծխայն երկու գաղա-
փար Աստուծու մասին, մին թէ Աստուծած բարե-
րաբռնմէ մարդիկներին, ծիւաը թէ Աստուծած պատ-
ժումէ մարդիկներին: Մանուկները զարոց մտնելիս
սոցանից աւելի ոչինչ չգիտեն Աստուծու մասին:
Պէտքէ նկատել, որ պատժող Աստուծու գաղափարն
աւելի է մանուկները մէջ քանթէ բարերարող, սի-
րող Աստուծու գաղափարը:

Կրօնուսոյցը պիտի սկսէ իւր, դասերը Աստուծած
և Նորա յատկութիւնները ճանաչեցնելով մանուկ-
ներին, մանաւանդ որ շատ շուտ են սկսում ընդհան-
րապէս ազօթքներ սովորեցնել: Բայց ազօթքը հիմն-
ված է Աստուծած ճանաչելու վերա, լինչպէս կարօղ
է մանուկը գիտակցարար ազօթել առ Աստուծած
այսինքն ինդքել Նորանից ողոքմութիւն և չնորհ,
գոհանալ Նորանից և իմաւաւորել Նորան, եթէ չու-
նի ձիշդ գաղափարներ Աստուծու և Նորա յատկու-
թիւնների—ամենակարօդութեան, բարօւթեան, ա-
մենիմաստութեան մասին: Հռչակաւոք ավաստվացի

մանկալարժ պ. Դիտուս իւր գործնական մանկալարժութեան ծրագրի մէջ ասումէ, որ կրօնական զարգացումն հնարաւոր է նոյն խոկ ամենափոքր հասակում տեսանելի բնութիւն դիտելով. „Աըեգակը, լուսինը, աստղային երկինքը, որու եւ կայծակը, հողմ եւ ամպերը, զանազան օդային երեւոյթները, տարգան եղանակների փոփոխութիւնը, երկիրն իւր գեղեցկութիւններով, իւր հարուստ բազմատեսակ կեանքով,—ահա սոքա են այն առաջիկաները, որոնց մէջ մանուկի սիրաը զարմացմաք գգումէ բարձրագոյն գորութեան ներկայութիւնը. Նորա նկատողութիւնները, նորա նախազգացմունքը ստիպումեն նորան մտածելու. Նա կամենումէ իմանալ. որտեղից, թե ամեն բան կայ, եւ անհամար հարցեր է առաջարկում, որոնց կարօդ ենք պատասխանել ոչ այլապէս, բայց միայն ցոյց տալով Աստուած. Այստեղ են ահա կրօնական հանացօղութեան հիմերը եւ այստեղ են ներկայանում միջոցներ հասկացնելու մանուկին մի, ամենակարօդ, ամենիմաստ, ամենաբարի Աստուածու գաղափարը.:

Ամենից առաջ կրօնուսոյցը պիտի տպաւորէ մանուկի մտքում, թէ Աստուած անսահման սէր է, թէ ամենայն ինչ գոյացել է աշխարհում եւ մենք ինքներս գոյութիւն ունինք աշխարհում միայն նորա ամենաբովանդակ սէրով եւ թէ նա մեզանից ոչինչ է ցանկանում, բայց միայն նոյնակս սէր դէպի նա եւ դէպի մեր նմանները. Յօժարեցըք մանուկներին Աստուած սիրելու եւ երբ սէրը նոցա մէջ դարթած կլինի, այն ժամանակ երանք կցանկան

և կիսնդրեն, որ նոցա սովորեցնեն Աստուծու Հետ
հաղորդակցութիւն ունենալ: Ահա այդ միջոցին այս
նպատակով պիտի սովորեցնէք նոցա աղօթքը: Այս
ժամանակ աղօթքը նոցա համար պարտականու-
թիւն չի լինի, այլ նոցա սրտի պիտոյք: Նոքա իրանք
կինդրեն, որ նոցա սովորեցնեն աղօթքներ և չեն
ձանձրանայ նոցա սովորելով:

Վերջապէս կրօնի դասեցը կարեսը է սկսել Աս-
տուծու և նորա յատկանթիւնների մասին խօսելով
նորա համար, որ առանց այս ուսման մանուկները
չեն կարօգ յաջողութեամբ լսել սրբազն պատ-
ճռթեան գասեցը:

Բայց կրօնի դասագրքերում Աստուծու յատկա-
թիւնների մասին դասեր կամ չկան ամենենին կամ
հաղորդվումեն այս համարու ձեռով թէ «Ցի է Աս-
տուծ յափուենական, յափուեան կար, կայ և լի-
նելու է միշտ: Ամենայն ինչ ստեղծել է Աստուծ
և ոչինչ կարօգ է լինել առանց Աստուծու: Աստուծ
ամենասուրբ և ամենակատարեալ էակ է»:

Աստուծային կատարելութիւնների մանկավար-
ժական բացատրութեանը պատշաճաւոր ուշք զարձ-
րեց ուսական գրականութեան մէջ Դ. Աօկոլով
աւագ երէցը իւր «Եօնի ու Ճերմակ օ Եքրի և
իրավենութեան քրիստոնութեան» ամսագրում:
Նաև ցանկալի կլինէր, որ այս գրքի հետ ծանօ-
թանային մեր կրօնուուցների: Ահա ինչպէս է ա-
ւանդում հ. Աօկոլովը իւր դասեցը մանուկներին: Յե-
տապայ կտորը նորա դասի մի մասն է:

Աւսուցիչ: —Պատահած է ձեզ երբեկցէ հողի մէջ սերժ ձգել: Աշակերտ: —Պատահած է: Ուս: —Ի՞նչ էր դուքս գալիս նորանից, որ դուք սերժ էիք ձրգում: Աշ: —Բուսնումէին տերեւիկներ, և յետոյ ծաղիկի: Ուս: —Դուք պատրաստեցիք արդյունք այն ծաղիկը: Աշ: —Ոչ, նա բուսու երկրեց, իսկ ես միայն սերմ ցանեցի: Ուս: —Ո՞վ է տուած երկրին այնպիսի ոյժ, որ բուսցեց ծաղիկ: Աշ: —Աստուած նորան այդպէս է ստեղծել: Ուս: —Ուրեմն Աստուած ստեղծեց ծաղիկը: Իսկ դուք կկարողանալիք երկրեց ծաղիկ գոյացնել: Աշ: —Ոչ: Ուս: —Մենք չգիտենք գոյացնել այն, ինչ որ ստեղծել է Աստուած, նշանակումէ Աստուած անհամեմատ աւելի խելք ունի քանիթէ մարդիկ, Բոլորն ինչ որ ստեղծել է Աստուած, վերին աստեղանին լելացի է այսինքն իմաստուն է: Երբ դուք աւելի կծանօթանաք երկրի հետ, այն ժամանակ ևս առաւել կիմանաք թէ Աստուած ինչպէս ամեն բան իմաստութեամբ է սահմանել: Եւ որովհետեւ Նա աժեն բան մեծ իմաստութեամբ է սահմանել: Նորան ասումենք ամենիմաստ: Ուրեմն ինչի համար է կոչվում Աստուած ամենիմաստ: Աշ: —Աստուած կոչվումէ ամենիմաստ նորա հաճար, որ Նա աժեն բան ամենամեծ իմաստութեամբ է սահմանել: Ուս: —Եթէ Աստուած ամենիմաստ է, կարող է ծիթէ այնպիսի բան լինել, որը Նա չիմանար: Աշ: —Ոչ, Նա աժեն բան զիտէ: Ուս: —Այս, մանուկներ, Աստուած ամեն բան պիտէ: Նա դիտէ ինչ որ կար առաջ, այն ևս պիտէ ինչ որ պիտէ լինի յետու: Ուրեմն ինչպէս կոչելու է Նորան, եթէ Նա ամենը պիտէ: Աշ: —Նորան կոչելու ենք ամենագիտ:

Ուս. — Աւրեմն մէհնք խմացանք որ ամենակարօղ Աստուած միեւնոյն ժամանակ ամենիմաստ և ամենագէտ է:»

Կրօնուառոյցը պիտի յօրինէ այս տեսակ քանի մի դասեր, որ զանազան օրինակներով բացատրէ աշակերտներին Աստուածու բոլոր յատկութիւնները: Խը զատօքնթացի սկզբում մանուկներին Աստուածու մատին կանոնաւոր գաղափարներ հաղորդելով պիտի շբաւամիանանայ կրօնուառոյցը, այլ կարեւոր է, որ յետոյ ևս, ս. դրքի պատմածներ սովորեցնելիս, նորից լիշտեցնէ Աստուածացին կատարելութիւններ և լրացնէ աշակերտների անդիկութիւններն այս մասին: Օրինակ նախահայրերի մեղանչելու մասին պատմելիս, կրօնուառոյցը կարօղ է խօսել աշակերտների հիմ Աստուածու արդարութեան վերահաշքների մասին պատմելիս, Աստուածու ամենակարգութեան վերա, և ապան: Աւելի նպատակարժար կլինէր Աստուածու և Նորա յատկութիւնների մասին իրաւելու նիւթը ստեղծագործութենից լիբրցնել: Այսպէս է վարդում և ուստաղն կրօնագէտ Աթ. Պօլուովի: Միւս տէտրում կառաջարկենք ուսուցիչներին ստեղծագործութեան նիւթից յօրինած օրինակելի մի դաս Աստուածու յատկութիւնների մասին:

ՄԱՆԿԱԿԱՆԻ ԽՈՂԵՐ:

Ա. Կնմանի:

Այս անդամ կրացատրեմ քանի նի խաղեր: Մեծերից կամ ուսուցիչներին ստեղծագործութեան նիւթից յօրինած օրինակելի մի դաս Աստուածու յատկութիւնների մասին:

տում։ միւսները կոյք գոյք գալիս են և առաջուց,
իրանց մէջ որոշած անունները յաբոնումեն չոյց
նստողներին։ Նոքա ևս կարգով անուանումեն եր-
կու անուններից այն, որը կցանկան։ անունի տէրը
տնցնումէ իւր անունը արտասահող Տօր կողմքը։։։
Այսպէսով բոլոր տղաները բաժանվումեն երիւ
հաւասար մասերի, յետոյ իւրաքանչիւր մայր ժողո-
վումէ իւր զաւակներին առանձին տեղեր և նոցա-
նից իւրաքանչիւրին կեղծ անուններ է դնում։ Կա-
րելի է գնել կամ մետալների, կամ պտուղների,
կամ պատմական անձների և կամ աշխարհագրա-
կան տեղերի անուններ, որպանից կարելի է ուրիշ
օգուտ ևս քաղել։ Այնուհետեւ խրաքանչիւր խում-
բը, միմեանցից 2—3 սաֆեն հեռաւորութեամբ
դէմ առ դէմ շարվումեն կամ կլզումեն։ Մայրերը
մի անգամ զաղտնի կերպով իրանց զաւակներին
անունները լիլեցնելուց յետոյ, փոխումեն տեղե-
րը, այսինքն առաջին մայրը գալիս է երկրորդի
տեղը, իսկ երկրորդը գնումէ առաջնի տեղը։ Այ-
նուհետեւ սկսվումէ բուն խաղը։։։ Ա. մայրը, որ
երկրորդի կողմումն է, իւր գլխարկով կամ մի ուրիշ
շորով ծածկումէ ալդանելի խմբի անդամներից մինի
աչքը և բարձր ձայնով կանչումէ իւր զաւակներից
մինին, օր. «խնձոր»։ Խնձորը կամացուկ, ոտների
ծալքերի վերա մօտենումէ աչքը փակվածին և
թեթևակի մատով կաշումէ նորան և իսկոյն վերա-
դառնում և իւր տեղը նստում։ Խնձորն իւր տեղը
հասաւ թէ չէ, երկու կողմից ևս սկսումեն ծափ
տալ և ասել կնմանի (նմանումէ)։ Այդ միջոցին
մարկած աչքերը արձակումեն, նա այդ ձախների

և ազաղակի մէջից պիտի դունէ երան մօտեցող
խնձորին։ Նմէ գտաւ, այն ժամանակ խնձորը պի-
տի գալ և այս կողմին խառնվի, հակառակ դէպ-
քում ինքն է անցնում միւս կողմ։ (Հասկանալի է,
որ առաջին դէպքում ա մայրը պէտքէ խնձորի և
նոր զաւակին անունները փոխէ, իսկ երկրորդ դէպ-
քում, բ մայրը պիտի գայ և խնձորին անուն որոշէ)՝
Յետոյ նոյն բանը կըկնումէ Բ.ը. և այսպէս շարու-
նակվումէ մինչև վերջը....

Այս խաղը ամենափրեների համար աւելի յաց-
մար է. թէս մէջը շատ շարժողութիւն չկայ, բայց
նախ այս նկարագրեցի, աչքի առաջ ունենալով
որ սա բուն հայկական խոզ է։ Այսպէս կարծու-
մեմ նորանից, որ նաև այս խաղը բայցի Հայերից
ոչ ոք չենք տեսել խաղալիս, և երկրորդ կնմանի
հայերէն լեզուով է ասվում, մինչդեռ միւս խաղերը
ուրիշ ազգերն ևս խաղումեն, և խոռքերն ևս կամ
տաճկերէն կամ ուսւերէն են։

Բ. «Գիյ—դիյ, Դօմբալ—դօմբալ».

Տղաները ձեռք ձեռքի բռնած կիսաշրջանաձեւ են
կանգնում, երկու ծալքերին մի մի առաջնորդներ։ Խո-
ցանից մինը հովիւ է, միւաը անցորդ։ Հօվիւ, հարցնու-
մէ անցորդը։ Ի՞նչ է, ուատասխանումէ հովիւ—Հօտը
ուր է։—Ազագածում (Պարաղաղում)։—Ի՞նչ է տր-
ծում։—Սպիտակ կաթ։—Հապա մեզ Ճանապարհ...
—Ահա... ասումէ հովիւը և ցոյց է տալիս իւր և իւր
ձեռքից բռնած տղալի մէջ առաջացած դատարկ

անցը: «Այդ մըջոցին նա բռնած ձեռքը բարձրացնումէ և անցորդը «Գիւ—գիւ Դօմբալ—դօմբալ.. երգելով անցնումէ բոլոր միւս տղաների հետ (իշարկէ ձեռք ձեռքի բռնած, բացի հովուի ձեռքից բռնող) այդ տարածութենից. հասկանալիք է, որ վերջինս կապվումէ.... Ամեն ոք իւր տեղը հասնելուց և կրկին կիսաշրջանաձև կանգնելուց յետոյ, անցորդը շարունակումէ միւնոյն կերպով: Այս անգամ անցքը արդէն կապվողի և նորա ձեռքից բռնողի մէջ առաջացած զատարկութիւնն է.... Այսպէս մինչեւ վերջը: Եթր վերջանումէ վերջին աշակերտը, այն ժամանակ առաջնորդների մէջ վէճ է ծագում, ու որքան պիտի կապվածներից առնէ, չեն համաձայնում: Վճռվումէ ոյժով, ովք որքան կարողանայ, առնէ: Կապվածները պինդ բռնած են միմեանց ձեռքից, մայրերը սկսումեն իւրաքանչիւրն իւր կողմը քաշել, բայց շուտով ամեն բան ոսուլումէ: յանկարծ կապը մի (երեմն ևս մի քանի տեղից): կտրվումէ, և երաքանչիւրը առնումէ իւր մասը: Եսատ առնողը խաղը անառնումէ....

Խաղը նորից է սկսվում: Միայն այս անգամ հովիւն ու անցորդը իրանց գերերը փոխումեն....

Քաւական գուարձալիք է այս, եթէ լու խաղան:

Գ. Կառնեմ—Զեմ տոյ.

Խաղի առաջնորդները երկու աշքաբաց տղաներ են: Նոցանից մինի օրինակ ա-ի քդանցից բռնումէ աշակերտներից մինը, նորա քդանցից երկորդը, երրորդից չորրորդն և ալին բոլոր խաղացողները. սկս-

կաս աչքաբաց պիտի չլինի և վերջինը...: Ա-ը ա-
մեն մինին գնումէ անուններ (ինչպէս Կնմանի խա-
ղում): Բ-ը մօտենումէ ա-ին և հարցնումէ ինչ ու-
նիս, ա-ը-- պառզներ (կամ քաղաքներ կամ մեծ
մարդիկ և այլն): Թագաւորը խնձոր կամեցաւ, ասումէ
բ-ը: Չունիմ, լինումէ պատասխան: Տնինձ:—Չունիմ:
Կեռնու:—Չունիմ: Մի խօսքով նա տալիս է բազմա-
թիւ պտուզների անուններ, մինչև որ անենավեր-
ջին աշակերտին անունը իմանալ: (Ա-ը տեսնելով,
որ բ-ը չէ գտնում ամենավերջինի անունը, երբեմն
ինքն է ասում օրինակ սալոր ունիմ:)--Սալոր:—Ունիմ:
Տուր, թագաւորն է կամենում,—Չեմ տայ—զօրով
կառնեմ:—Չեմ տայ:—Կառնեմ:—Չեմ տայ.. և այլն
այսպէս խօսելով բ-ը վագումէ և կամենումէ սալորը,
որ ամենավերջին աշակերտն է, յափշտակել տանել.
բայց ա-ը վազումէ առաջ է գալիս և չէ թողնում,
որ սալորին մօտենալ (պէտքէ նկատել, որ ա-ը
բ-ին արգելելու համար չպէտքէ բռնէ, հապա ձեռ-
ները բացած, բ-ի առաջ պիտի դուրս գալ և ար-
գելէ): Բայց բ-ը այնքան հարպիկ է, որ վազած
տեղից յանկարծ լետ է դառնում, սուտ յարձակ-
մունքով խարում, մոլորեցնումէ ա-ին և կարօղանու-
մէ սալորը լոլել....: Բ-ը առնումէ տանումէ իւր տունը
սալորին և նորան ստրուկ է շինում: Նա նորան որո-
շումէ պարապմունք, օրինակ երկու փակտի կտոր
տալով ձեռքը, պատուիքումէ գուլպայ գործել....:

Բ-ը վերազառնումէ շուտով ա-ի մօտ և սկսումեն
միւնոյն խօսակցութիւնը: (Ա-ը կարող է առա-
ջին խաղի ժամանակ վերջին աշակերտի անունը
պատուղով որոշել և բ-ին ասել, որ պառզ ունիմ,

երկրորդ խողի միջօցին արգէն կարօղ է վերջին աշտակերտի անունը մետաղ զնել եալն և այդ ասել թին): Այս անգամին ստրուկին բ-ը ուրիշ պարագաներ է սրոշում, օքինակ եքլատգործութիւն և այսպէս կշարունակվի, մինչեւ որ բոլոր աշտակերտներին գերի առնելով ծնուժի ա-ը: Նու փախչումէ, նորա խոեւից վազումէ բ-ը և աշխատաւմէ բանել.... Աթէ բանեց—նշանակումէ խոց տարաւ....:

Բացի նորանից, ոյ շատ զուարձակի է այս խոզը, շարժմունքն ևս բաւական բազմատեսակ են....:

Աերջին երկու խաղենք այսուեղ թէեւ շատ վազուց ժամանակից են խաղում, բայց խօսքելը թիւրքերէն են, բացի վերջնի մանրամասն խօսակցութենից, որը հայերէն է լինում. այդուեղ միայն թիւրքերէն ալըթը—վէրմէմէ (կառնեմ—չեմ տայ):

Այս անգամ երեք խաղ նկարագրեցի. Եթէ միջոց կունենամ, կաշխատեմ նորեր ևս գընէ....

¶.

ՄԱՐԶՈՒԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԱՐԴԻ ԲՈՂՈՅԱԿԱՆ ՎԻՃՈՒԿԸ:

(Փոքը Ասկայում):

Տեղացի Հայերի առջի ազգակին գործոց, զբարոցական, վանական և եկեղեցական վիճակաց վրայով համառօտ տեղեկութիւն մը տաէ արժան կըհամարինք:

Ի Մարգուան կբնակին 1100 տուն Լուսաւորչական, 130 տուն Բողոքական և 15 տուն Պապական Հայք. նաև 80 տուն ևս մաղաղործ Հայք ուրիշ թաղի մը մէջ: Դրեթէ 15 տարիներէ ի վեր տե-

դույս Առևտութական Հայեր խռովութեան և
կուսակցութեան ովկէանին մէջ կծփան, որ պատ-
ճառ եղած է իրենց այս յետամնաց և ցաւալի
ընթացքին, Եղեսեան սրբազան, Ազգ. Կեդր.
Վարչութեան երկար ժամանակ անսաստելով, կու-
սակցութեանց տեղի տուած էր, և Պատրիարքա-
րանն վերջապէս Խոլոտամեան Պօղոս վարդուպետն
առաջնորդ ընտրած էր Տարւոյ սկիզբներն այն-
չափ սաստկացած էր Հակառակութիւնն որ Խոլ-
ոտամեան պարտաւորեցաւ խոյտ տալ վիճակին ի
Պոսֆոր, տեղացիները մահու և կենաց հգանց մէջ
խորասուլելով. Եղեսեան մէկ կողմանէ կացծարծէր
տեղութեան հուրն և իր աշած սրտին յագուրդ տա-
լու համար զոմանս յազգայինոց կըքաշկըռուէը
դաստարանէ ի գատարան, մինչև որ Մեծ Պատա-
ւորէն ինքն ևս կոչուեցաւ հաշիւ տալու.

Նորա մահուամբ դարձեալ չմաղաղեցան տեղա-
ցիք առանց գլխի և ժողովոյ մնալով. Հուսկ ապա
յուղմունք դադարեցան և ամեն ոք իւր ուշադրու-
թիւնը ժողովոյ դարձուց, և անկար եկեղեցականի
ծը գործակցութեամբ գործել ուզեց. Բայց ազգ.
իշխանութեան կազմակերպութիւնն նորէն գժուա-
րութեանց տեղի տուաւ. ոմանք յազգայինոց և մա-
նաւանդ պանդուխտք սաստկապէս կդանգատէին թէ
խարդախութիւն ի գործ դրուած և կուսակցու-
թեանց պարագլուխներն ընարուած էին կամ այն-
պիսի անձինք, որք ի վազուց հետէ անուանի եղած
են ազգային հաստատութեանց յատկացեալ մեծա-
մեծ գումարաց յունիդոյն ծատակացարարութեամբք:
Այս միջոցներուն Խոլոտամեան դարձեալ ընդունեց

տեղապահական պաշտօնն, և շաբաթէ մ'ի վեր ասոտ
է: Պարտինք խոստովանիլ Ճշմարտութիւնն սակայն
որ Նորին Գերապատուութիւնն տարւոյս առաջին
շըշանին մէջ գործօն մասնակցութիւնն մը չունեցաւ
ազգային գործոց մէջ, որք այնակիսի անձանց մի-
ջոցաւ կլառավարուէին, ոյց անկարողութիւնն ակ-
ներեւ էր, և նոյն միջոցին էր որ կորուսինք մեր
ամենակարեւոր մէկ իրաւունքն, այն է կառավար-
ութեան դուռն ի դիմաց ազգին ունենալ անդամ
մը, և որ տեղի տուաւ շատ մը ազգային խնդրոց
ի վնաս ազգին առաջուու լինելու: Յուսալից են
բազումք որ Նորին Գերապատուութիւնն Ազգ. իշ-
խանութեան և Առաջնորդութեան պիտի տայ ստա-
նալ իրենց կորուսեալ արժանապատուութիւնն և
նշանապիութիւնն, և մենք այսուհետեւ առելթ պիտի
ունենանք պարբերաբար ներկայացնել իւր գործ-
քերն և բարեկարգովութիւններն:

Հայք ունին եկեղեցի մը Ս. Աստուածածին
կառուցեալ 1834-ին Յակոբոս Պատրիարքի նախա-
ձեռնութեամբ, իրեն կից ունի երկու մատուներ Ս.
Կարապետ և Ս. Յակոբ. իրենց դպրոցն ալ եկե-
ղեցւոյն պէս փառաւոր և վայելուչ է: Եկեղեցին
ունի իրեն կից շատ մը սենեակնեղ առաջնորդա-
րանի և ժողովոց համար. սոյն երկու հաստատու-
թիւնք, ունենալով սակայն անշարժ և հաստա-
տուն կալուածներ, խեղճութեան անդին ծայրը
հասած են: Կալուածոց գլխաւորներն են Խան մը
և Հավզա աւան, որ տարին 200 ոսկւոյ արդիւնք
կընայ բերել, 17 խանութով բեհեզզոյ վաճառատուն
մը (Պէղչստէն), 25-է աւելի ուրիշ խանութներ և

Յ տուն։ Այս կալուածներն նդեսեանի առաջնորդութեան օրէն ի վեր մասնաւոր անձանց գծուձ շահ հախնդրութեան նկամ եղած են, որք երենց վրայ կալուածագիր շնչել տուած են և ազգին ապահովագիր մ' անգամ տալու շնորհն զլացած են։ Առոր աներաւ նպատակն ես յայտնի է... Մաղթենք որ Երապատիւ Խոլուածեան ասոր ալ ճար մը գտնէ։
Գանք վարժարանաց վիճակին։

Ս. Սահմանակարգան Հոգելոյս Գէորգ եպիսկոպոսի ջանիւք և նախաձեռնութեամբ շնուռած է։ Ուսուցիչք 5, ուարեկան ծախք 120 սկի, բաժանուած է ծաղկոցի և ուսումնարանի։ Կըսսախօսութին հայերէն, տաճկերէն, գաղղիերէն, կրօն, աշխարհ, թուարան։ Ելն Աշակերտաց թիւն է 320, Լուսաւորչական մանկտւոյն մի երրորդը։

Ագուական գործարան համանուն ընկերութեան մը կողմէ բացուած 10 տարի առաջ, թէպէտ ժամանակ մը խիստ յառաջապէմ էր և մինչև անգամ ուարաց նախանձը կգրգռէր, սակայն այսօր յոյժ ստորին է, երկու տեղացի օրիորդք կկառավարին։ Թիւ աշակերտուհեաց 50 գուեթէ մեր օրիորդաց մէկ վեցերորդն, Ուլի կերթանք, առաջ թէ յեւ Սոյն վարժարանի շէնքը նորոգելու և լաւ ուղղութիւն մը տալու համար Բարտովեան Յովհաննէս վարդապետի նախապահութեամբ մասնաժողով մը 400 մէջիտի հանգանակութեան զիմեց, սակայն չաջողեցաւ և 170 մէջիտի վրայ մնաց, այն ալ Ագապեան ընկերութեան դրամագլուխը գրեթէ նւայս ևս սա գերազանց պատճառաւ որ մասնախմբի անդամք, այնպիսի հանգանակութիւններ առիթ ու-

նենալով, մեծամեծ գումարներ յափշտակած և
իւրացուցած են և այսօր խօսքն անդամ չեն ըներ:

Զարժանք չէ որ ժողովուրդն, ծանրապէս պար-
թակղելով նախնի երեսոյթներէն, այսօր խոյս տայլ-
կալուածներուն արդիւնքին մէկ մասն և առկախ
մնացեալ հաշուոց պարունակած գումարին դոլան
մէկ մասն էրկու հարազանց դպրոց կընայ կառու-
ցանել, և մենք ալ բազմաց հետ կըանձնարարենք
Խոլոտամեան հայր սուրբի որակչս զի «Հինը հինով
նորոգէ»:

Աւստի ինչպէս որ կտեսնուի 1884 տարին կըթա-
կան մասին ևս յոյժ ապարդիւն տարի մ' հղաւ: Ու
միայն նախորդ տարուան չափ քայլ մ' սուխնք, այլ
և մի քանի քայլ չետո դարձանք: Մեր երկուու
ընկերութեանց կաղղալուծեալ վիճակը այս տա-
րւոյն մէջ ևս շարունակեցաւ:

— Բողոքական ազգայինք ևս տարւոյս սկիզբներն
ուոգեալ և անկայուն վիճակ մ' ունէին. իրենց երե-
ցութեան պաշտօն կատարող անձն Ամերիկա գրա-
նուելով և վերջերս հրաժարելով, հովեւ կոչեցին
երենց զԳեր. Մ. Իգնատիոսեան պրոֆէսոր Այնթափ
Կոլէժի, և որով վերջ տուին անսկատեհութեանց:
Դորին Գերապատուութիւնն ողջամիտ և ազատա-
թիու անձ մը լինելով, համայն ազդայնոց և տե-
ղացուոց համակրանքը կվայելէ: Ունին վարժարան
ու արական սեռի համար. տարեկան ծախք 70 ոս-
կի, պաշտօնեալք 2, աշակերտք 120,80-էն աւելին
կուսարոցական. կուսուցուին հայերէն, անգլիերէն,
տաճկերէն, թուարանութիւն, տոմարակալութիւն,
իրօնագիտաութիւն, աշխարհագրութիւն, մարդակագ-
մութիւն:

Սոցա կը խոսասարդութիւնն կազմուծ է Կը թահան չուներանիւն մը երկու տարիէ ի վեր. սոյն ընկերութիւնը կկառավարէ երեք դպրոցներ, ծախքը բոլորովին ինք հոգածով, և մի քանի անձինք ևս կը թել կուտայ սոյն վարժարանաց սւաշտօնէութեան կարգելու համար. Աւնի Արցանց ջրհաղողն մը, Թողարքին վարժարան մը և Բոշաններու թաղը վարժարան մը:

Կաթոլիկ աղքայինք ունին փոքրիկ եկեղեցի մը, քահանաց մը և երկսեռ դպրոցներ երկու հատ. երեք Նիզվիթք կան, որք կդասախոսեն և կկառավարին ցիշեալ ժողովութովը. Ունին գեղերային դըպրոց մը, որը զաղիներէն կուսուցուի, բան մը չսորվեցնելու նախառական: Երիցունց վարժարանաց մէջ աշակերտք 180, իրը 150-ը լուսաւորչական.

Գանք ալժմ վիճակային ազգայնոց համառօտ մէկ տեղեկագիրը տալ, բնդարձակն ապագային թողլով:

Անոսիս—1200 տուն հայ, 3 եկեղեցի, 4 վարժարանք, աշակերտ 420. Կաթոլիկ—հայք 15, բողոքականք 30 տուն:

Սիւ—Համբ—450 տուն հայ, 1 եկեղեցի, 2 վարժարան, բողոքականք 25, կաթոլիկ 8:

Ակերտ—Համբ—35 տուն հայ, 1 եկեղեցի. բողոքական 10: Յոյժ խեղճ և լքեալ են:

Վելիք—Եօբրէ—210 տուն հայ, որոց 10-ը բողոքական. Էկեղեցի 1, վարժարան 1:

Խաչէի—50 տուն, Առաքէս—25, Կէչէի—40, Հէճ—4իւ—20, Հակէ—17, Մառէն—10 տուն հայք կան:

Հաս ի գէու է ցիշել տեղւոց Ամերիկացի Միսիոնարոց կը թական հաստատութիւններն. Ասպարածոքանին մէմարտն, 20 տարիներէ ի վեր հաստատեալ,

ուր կկրթուլին և կպատրաստուին քարոզիչ լինելու
անձինք այլ և այլ ուսմանց, մասնաւորաբար Աս-
տուածարանութեան մէջ:

Բարյագան վրձուրան 1881-ին հաստատեալ երբե-
կրկրողական վարժարան: Կուսուցուին հայերէն,
առաջկերէն, անդլիերէն, գաղղիերէն, լունարէն,
տարբալուծութիւն, բնագիտութիւն, երկրաբանու-
թիւն, փելիսովայութիւն, երկրաչափութիւն, ար-
շէքրա, տոմարակալութիւն և այլն: Դասատուք
են. Հարլ Դրէսի, Էտլար—Ռիկս, պրոֆէսօր Կ. Թու-
մայեան, տոքտ. Մ. Ալթունեան, Սմիդ, Նաև ուրիշ
վեց դասատուներ: Աւսման շրջանն հինգ տարի է.
Ծիւ գիշերօթիկ աշակերտաց 50, ցերեկօթիկ 20.
Կըօնի խտեց :կայ, որոյ վասն Կեսարիաէէ, Տօղա-
ուէ, Զարշանպայէէ, Աամսոնէէ, Ամասիաէէ, Պուռա-
և յայլ տեղեաց խումբ խումբ կը դիմեն: Տաղեկան
ծախք կազմենք թէ 800 ոսկիէ աւելի լինելու է:
Իւս առաջին ընթացաւաբանեցն ալս տարի պե-
տի հանէ:

Օդիրդաց Ճեմարան: Կուսուցուին հայերէն, անդլիերէն,
լունարէն, դաշնակ, ձեռագործ, կար և այլն. աշա-
կերտուհիք 70 գիշերօթիկ և 15 ցերեկօթիկ:

Սոյն երկու հոգակապ հաստատութիւնք մեր քա-
ղաքին համար չիրաւի մեծ օրհնութիւն մէն: Ճա-
խուց համեմատութեամբ տարեկան թողակն յոյժ
սակաւ է, այն է 71, ոսկի: Կմնայ մեզ սպասել սոյն
ժախուց հաւասար արդիւնք:

Մարզուան շինուած է Խաչի-լեռան ստորոտն.
4,500 տուն կպարունակէ որոյ 3,200-ը թուրք և
15-ը յոյն են: Իւր բերքերն են. գինի, յորեն, մե-

կոն, ափիոն։ Տաճելք ունին 30-ի չափ մզկիվթ, առնուանի է Բաշա—Շամխալն և Թայ—Խանը, գորս Քչօբրիւլիւ Վէզիրն շինել տուած է։

Ա. (Արևելք)։

ՖՐԱՆՍԻԱՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑՆԵՐԻ ՆԵՐ-
ՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ։

Հասարակական դպրոցների կարգմակերպութեան և կարգապահութեան խնդիրն դաստիարակութեան մէջ առաջին տեղ է բռնում։ Ինչպէս անցեալ 1884 թ. Գրէարք (Փարիզի ակադէմիայի փոխ-ըէկուորք) նշանաւոր յօդուածը « Կարգապահութեան ոգին կըթութեան մէջ » օգտաւէտ ազգեցութիւն գործեց, նոյնպէս և փետրվարի 7-ին հրատարակալած ազգ. լուսաւորութեան նախարարի հետևեալ շշաբերականը շատ օգուտ կրեք նոյն սկզբունքը գործադրելիս։

«Անհրաժեշտ է, ասումէ նախարարը, ցոյց տալ հասարակութեանը մանկավարժանոցների և գիշե- թօթիկ մեծ միջնակարգ ուսումնարանների մէջ ե- ղած զանազանսւթիւնը։ Լիսէօններում և կոլլէժ- ներում, որտեղ յաճախ հաւաքվումեն քանի մի հարիւր որդեգիրներ տարբեք հասակով, ծագմածք և կըթութեամբ, պահանջումեն միատեսակ և շա- րունակ վերահսկողութիւն։ Բայց կարելք է նոյն կանոնագրին ենթարկել մանկավարժանոցը, ուր գտնվումեն միջին թուով 50-60 աշակերտներ 16-20 տարեկան հասակով, որոնք մտած են դուրոցը մըցա-

Նաևկան քննութեամբ, պատրաստվումէն միևնույն
կոչման համար և վաշուց ընտելացած են իրանց
ընտրած մասնագիտութեան խիստ պահանջների
հետ: (Ֆրանսիայի մանկավարժանոցները հասարա-
կական դպրոցների համար ուսուցիչները պատրաս-
տելու համար են): Անմտութիւն կլինէր, եթէ նոցա
հետ վարվէինք որպէս փոքր երեխաների հետ:
Նոքա մի տարուց չետոյ պիտի ստանան ուսուց-
չական վկայտկաններ և դպրոցից զուրս գալով
մտնեն ուսուցչական ասպարէզը: Ուրեմն օտարութի
է նոցա իւրաքանչիւր բոպէ հսկողութան տակ զնել
և պատժել իւրաքանչիւր քայլափոխի և արտա-
սանած բառի համար:

Վերագիտողութիւն, կարգապահութիւն և հրս-
կողութիւն բառերը շփոթումնն երկու բոլորովին
տարրեր մտքեր: Վերադիտողութիւն բառը ամփո-
փումէ իւր մէջ 1) ներթական կողմն, այսինքն
գպրոցների ներքին կարգապահութիւն, ժամանակի
կանոնաւոր բաժանումն, պարտականութիւնների
կատարումն, աշխատանքի, հանգստութեան և պա-
րապելու ժամերի կանոնաւոր փոփոխումն եւ 2)
բարոյական կողմն, այն է աշակերտների բարոյական
ուղղութիւն, ամբողջ գասարանի եւ ամբողջ դպրոցի
վերա եղած բարոյական ազդեցութիւն, ուսուցչա-
կան հեղինակութիւն եւ վերջապէս աշակերտների
զանազան հոգեւոր կողմերի վերա ազդեցութիւն:
—Այս է կոչվում ահա մտքերի կարգապահութիւն:

Մանկավարժանոցներում վերագիտողութեան ա-
ռաջին մասը պիտի կատարվի վերատեսչի եւ տըն-
տեսի հսկողութեան ներքոյ նոյն իսկ աշակերտների

ձեսով, իսկ երկրորդ մասը ամենաթանկտղին նպատակ պիտի լինի թէ ուսումնական և թէ վարչական անձների համար: Խոկ զարոցի ներթական կարգապահութեան և ծառայողների պարտաճանաչութեան վեցաբերմամբ բաւական է, որ վեցամեսուշը ուսուցիչների հետ միասին կազմէ մի պարզ, որոշ և ճշգրիտ ներքին կանոնագիր, որը պաշտոնակէ միայն նախապէս խիստ քննութեան ենթարկված անօրէնութիւններ: Աշակերտները պիտի ծանօթանան կանոնագրի հետ բոլորովին գիտակցաբարար, մանրամասնօրէն բացատրելով նոցա խրաքանչիւր տնօրէնութեան օգուտը և հիմքը: Բացի սօրանից աշակերտները հետզհետէ պիտի ընտելանան վերադիտողութեան հետ հերթապահութեամբ հակելով մանկավարժանոցի բարդ վարչական կարգեցին: Այսպէս վերակացուի պաշտօնը մասամբ աշակերտները կատարած կլինին մեծ վայելչութեամբ:

Դպրոցի վերա մնումէ միայն կարգապահութեան մէկ կողմը, այն է աշակերտների բարոյական ուղղութիւնը: Իհարկէ, այս դէպքում դպրոցի վարչութիւնը աշակերտների վերա յոյն զնել չէ կարօդ: Այսուեղ հարկաւոր է վեցատասչի և ուսուցիչների համերաշխ գործունէութիւնը, աղդելու աշակերտների մտքերի և բնաւորութեան ուղղութեան վերա: Այս նպատակին հասնելու համար շըջաբերականը միջոցներ է յոյց տալիս:

Կանոնադրութեան համաձայն խրաքանչիւր ուսուցիչ զարոցում պիտի աւանդէ շաբաթական 20 ժամ: Այս ժամերից միջնին ըստուալ 3—4 ժամ պիտի գործածէ վերահսու լինելու պատարանական աշ-

խատութեան, Խորհրդին կարօտու աշակերտնեցի
հետ առանձնակի զբուցատրութեան, բոլոր կամ մի
քանի աշակերտների համար ընթերցանութեան
գրքերի ընտրութեան և վերջապէս գրաւոր աշխա-
տութիւնների հիմնաւոր սխալները ուղղելու վերա-

Նո չեմ պահանջում, որ ուսուցիչը վերակացուի
նման, նստէ ամբիօնի վերա և աշխատէ միտյն
լուսթիւն պահպանել, պատժելով յանշատողներին:
Ընդհակառակին, իրանց օրապահ ընկերի զանգ
խփելուն պէս իրանք աշակերտները պիտի հաւա-
քվին դասեր պատրաստելու և լուսթիւն պահպա-
նելու: Վերատեսչի կամ ուսուցչի գալը ամեն ան-
գամ աշակերտներին անկարգ գտնելու և նկատո-
ղութիւններ անելու նպատակով պիտի չլինի միշտ:
Երբեմն ուսուցիչը մանաւանդ սկզբում գուցէ ստիպ-
մի մի նկատողութիւն կամ յանդիմանութիւն անե-
լու, թող անէ առանց կարծելու թէ գորանով նա
պատանեակների պարապմունքի և նոցա ազատու-
թեան սկզբունքի դէմ է ներգրծում: Որովհետեւ
աշակերտները չեն իմանում շատ անկամ ինչպէս
յաջողեցնեն գործը, ուստի այս դէպքում ուսուցչի
մասնակցութիւնը կարենը է:

Երբեմն աշակերտների հետ ունեցած խօսակցու-
թիւնը, աննշան նկատողութիւնը, նոր բացատրու-
թիւնը աւելի թոյլ աշակերտներին բաւական են
նոցա առաջ տանելու և նոցա հետ ամբողջ դասա-
րանը: Աշակերտների համար ուսուցչի այդպիսի
վարժունքը վարձատրութիւն կլինի: Պարզ բան է,
որ սոբանով մանկավարժ ուսուցչի թէ հեղինակու-
թիւնը և թէ հաւատարմութիւնը գորանալով սի-

սելի կլմնի աշակերտներին, որովհետեւ վերոշեաւ դասախարակը ծունումէ աշակերտների մէջ, ոչ թէ ըրուցածաք նկատողութիւններ անելու, որ ձանձրակի է թէ նրան և թէ աշակերտներին, այլ բարեկամաբարաց խօսակցելու, օգնելու նոցա, օգեռ- ըելու դէակի գործունէութիւնը և վերջապէս ար- տադայտելու սէր և համակըռութիւն։ Եւ ահա աշա- կերտները, ուսուցչի առաջ բացվելով, կմաերմանան ուսուցչի հետ, իսկ ուսուցիչը կմօտենայ իւր մանկա- վարժական նպատակներին։

Ննջարանների մէջ վերապետողութեան վերա- բերմամբ շրջաբերականն ընդհանուր կանոնագրեւ մէջ ասումէ հետևեալը։

«Ինչպէս դասերի պատրաստութեան ժամանակ, նոյնպէս և ննջարաններում ևս չեմ կամենում, որ կարգապահութիւն վերակացուի ներկայութեամբ կատարիլի, որը ստիպված է սպառնալիքներով վերա- պահել։»

Այս դէպքում աւելի շատ աշակերտներից պէտք սլահանջել կարգապահութիւն, թոյլ չտալով մի- անգամայն աշակերտներին կուրութեամբ հնազան- դելու, այլ նաև նոյն հասուլին և առաջընթաց մտաւոր գարգարացան աստիճանաբար սլիտի ընտե- լացնէ իւր պահանջներին, — և ինչև որ փոքր առ փոքր հասկանան, որ նոցա հետ վարդումէն ոչ եթե փոքր երեխաների, այլ եթե հասակաւոր մարզեկների հետ։ Աշակերտները պիտի կանխառ իմանան, որ ուսուցիչը կարող է երբեմն ներկայ չլինել նոցա գիշերակին քնի, առաւտեան արթ- նութեան ժամանակ։ Հարկաւոր է նոցա բացա-

տրել, որ կարելի է գիտութեամբ իրանց միահակ
են թողնում, որպէս զի սովորեն առանց վերա-
կացուի լնքնակամօրէն և ճշտութեամբ կատարել
կանոնները: Որքան սակաւ լինի վարչութեան հըս-
կողութիւնը աշակերտների վերա, այնքան իրանց
վարքի թերութիւնների պատասխանատուն իրանք
կլինին:

Նրջաբերականի վերջաբանութեան մէջ առված
է հետևեալը: Հարկաւոր է աշխատել միայն, որ թէ
արական մանկավարժանոցներում, լինչպէս և իգա-
կան միջնակարգ դպրոցներում նոյնքան ուշագրու-
թիւն դարձնեն բարոյական կրթութեան վերա, որ-
քան ուսման, Թող վերատեսուչը ուսուցիչների հետ
միասին ամենից առաջ աշխատէ ոչ թէ աշակերտ-
ների վկայագրերի մասին, այլ նոցանոր մարդկի դար-
ձնելու: Թող նոքա պահանջեն երիտասարդ աշակերտ-
ներից առաջադիմութիւն ոչ միայն գիտութեան
մէջ, այլև այն բոլոր յատկութիւնների մէջ, որ-
պիսին կարող է ցանկանալ մի բարի հայր իւզ
որդու համար: Մանկավարժանոցի աշակերտները
պիտի պատրաստվին միանգամբ լից ուսուցչական կոչ-
ման և կեանքի համար, ոչ միայն բարոյախօսու-
թեան չորոցամաք դասերով, այլ դպրոցական կե-
անքի բոլոր բարեկարգութիւններով, որոնք պիտի
թելատըեն աշակերտներին առողջ հայեացք գործի
վերա և հաստատ կամք ամեն բանին աղնուու-
թեամբ հասնելու ոչ թէ ակամայ, այլ գիտակ-
ցաբար:

Բաւական է ասել, որ երիտասարդները բազդաւոր
պիտի համարեն իրանց մանկավարժանոցում,» որ-

պէս Հայրական անկիւնում կամ ընտանիքի մէջ։ Առ
դերազանց միջոց է աշակերտներին դպրոցի հետ
կապելու այն սէրով և ցանկութեամբ, որպիսին
զգութէ իւրաքանչիւր բարեքարոյ մաշղը դէպի իւր
Հայրական տունը։

Առ. Յ. Մ.

ՄԱՆԿԱՎԱՐԺ ԳՈԿՏՈՐ ԿԵՌԻ ՄԱՀ։

Գերմանիան, և նորա Հետ բոլոր մանկավարժա-
կան աշխարհը, կորցրեց իւր ամենամեծ մանկա-
վարժներից մինին—դօկտօր Կարլ Վէռը։ մեռաւ
լունվարին, սրտի մեծանալուց։ Մանկական հասա-
կում Վէռը իւր մօր պարզանք է եղել և մայրը ա-
մեն ջանք գուծ է զրել, որ որդին ուսուցիչ լինի։
Երիտասարդ Վէռը իւր ուսումն տռել է Գօթայի ման-
կավարժանոցում, առանձին ընդունակութիւններ
ունենալով երաժշտութեան համար։ Գօթայի մի
գոլոցում ուսուցչութիւն սկսելով, նա, որ ապագա-
յում պիտի փայլէր գործնական մանկավարժութեան
մէջ, գլուխ կորցնելիս է եղել իւր պաշտօնում,
չիմանալով ոչ աւանդելու եղանակ և ոչ գոլոցա-
կան կարգապահութիւն։ Ոչ տուած յանդիմանութիւն-
ներ, ոչ սպառնալիքներ, ոչ ծեծ շեն օդնել նորան
իւր բաղմաթիւ գասարանը կարգով սկահելու։ Մի
հին պաշտօնակից տեսնելով նորա վշտալի դրու-
թիւնը այս խորհուրդ է տռել։ մի կողմ դէք փայ-
տը, ձեր զատերը հետաքրքիր արէք և ամեն բան
լաւ կգնալ։ Վէռը կատարեց խորհուրդը, և այնու-

Հետեւ սկսեց իւր պաշտօնիք սկզել: Ֆրեօքէլի ժամանակարժանութիւնը այցելելով Բագլիբէնշահինում, սկսեց դպրոցը և մանուկներին, և այնուհետեւ հռչակվեցաւ իրսե նշանաւոր օւսուցիչ Թուշայում և Վալտէրհասուղէնում:

Սէց միջոցում Գօթալի մանկավարժանոցի վերաբատեսուչ Շմիդտը յանձնեց Կէռին մէտողիկայի դասեր: Կէռը մեծ օգուտներ քաղկեց Շմիդտի մարդարանական գաղափարներից և հրահանգներից:

Շմիդտից յետոյ մանկավարժանոցի վերաբատեսուչ դարձաւ Դիտէսք: Սա մի գարմանալի բարեբազութիւն էր Կէռի համար այսպիսի անմիջական հազորվակցութիւն ունենալ ժամանակիս գերմանական աժինափայլուն մանկավարժների հետ: Դիտէսի խորհրդով Կէռը յօրինեց իւր մեծահռչակ հեղինակութիւնը—Praxis der Volksschule:

Շուտով նա հրավերվեցաւ Դիտէսին յաջորդելու մանկավարժանոցի վերաբատեսչութեան պաշտօնով, այս յաջորդութիւնը առանց վտանգի չէց նորահամարման համար: Արդեօք սա մի լուսնի ըոյս սկսով ինիքը աշքեր խողովազ պայծառութենից յետոյ: Բայց Կէռը փառքով վարեց պաշտօնը:

1871 թ. պրուբական ֆալկ նախարարը սկսեց վերանորոգել սկզբնական դպրոցները և մանկավարժանոցները, Կէռը հրաւէր ստացաւ Հալբէրդշտատում նոր ձևի մանկավարժանոց բանալու: Հալբէրդշտատի մանկավարժանոցը մեծ հռչակ ստացաւ: Եվրոպական զանազան երկերներից, նոյն կող Ամերիկայից այցելուներ գալիս էին Կէռի աշխատութիւնները տեսնելու և ամբողջ եօթնեակիներ ան-

ցուցանումէին նորա մանկավարժանոցում: 1873 թ.
վերջում Կէռլ գալրոցական խորհրդականի (Schulrat)
պաշտօն ստացաւ և կրֆուրտի մանկավարժանոցի
վերատեսչութիւն: Այս պաշտօնում ահա մեռաւ
Կէռլ 55 տարեկան հասակում:

Կէռլ հեղինակութիւնները բազմաթիւ են. նա
նոյն տենդային գործունէութիւն ունէք ինչ որ ոնք
սովորաբար օգտաւէտ, բարի, ճշմարիտ և գեղեցիկ
գործի ամեն առաքեալը: Տաղանդաւոր գրիչ ունե-
նալով, նա խօսելու առանձին տաղանդ ունէք և
նորա ձառախօսութիւններն առանձին ներգործու-
թիւն էին անում:

Չունենալով շատերի ունանասիրութիւն, շատ
անգամ նա աշխատակցումէր անյայտ մի հեղե-
նակի հետ:

Վերոյիշված Praxis der Volksschule աշխատու-
թեան մէջ նա մանրամասնօրէն օրինակ է առա-
ջարկում բարեկարգված մի վարժոցի թէ ուսման
և թէ կարգապահութեան կողմից:

Այլև Կէռլ խօրագրութեամբ սկսեց՝ տպվել քա-
ռահատոր «Qeschichte der Methodik des deut-
tsche Volschul—Unterrichts» հեղինակութիւնը—
մասնագիտական մէտոդիկայի միակ ամփոփ պատ-
մութիւնը:

Նորա գործնական թուարանութիւնը և երկրա-
շափութիւնը Գերմանիայից դուրս ևս օրինակելի
դարձան: Կէռլ շատ գրեց նոյնակս մայրենի լեզուի
դասաւանդութեան մասին: Նա հրատարակումէր
մինչև իւր մահը Paedagogische Blätter (Մանկա-
վարժական Թերթեր) երկամսեալ պարբերաթերթը,

(որը ստանումէ Մանկավարժանոցիս խմբագրութիւնը), որտեղ նորա յօդուածները Կէռին յատուի գործնական խելքի և նորա անժահ մանկավարժական հանձարի ուղղութիւն ունին:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏՕՆԵՐԻ Ի ՅԻՇԱՏԱԿ ՄԵԾԱՄԵՌ
ՄԱՐԴԻԿԱՆԵՐԻ:

Մեր ծրագիրների գրքուկում խօսած ենք թէ ուրաքան կը թական նշանակութիւն ունին մանուկների դարգացման համար դպրոցական տօների սահմանումն և կատարումն, մանաւանդ եթէ տօնը կատարվումէ ի պատիւ արժանայիշատակ պատմական երողութիւնների կամ անձների, որոնց իշխառակը ամենքի համար թանկագին է։ Սա յաջող միջոցներից մին է աշակերտուների մէջ լաւ ընթերցանութեան և օգտաւէտ տեղեկութիւններ ստանալու հաշակ և սէր զարգացնելու։ Այսպիսի տօները կատարվումեն Սմէրիկայի դպրոցներում աշխախ։ անորին կամ միջնակարգ դպրոցների աշակեցաններին առաջարկումեն հայրենակից մեծ մասդիմների ծննդի տաշեղարձին սովորել անգիր պատմելու համար տօնելի անձի կեանքից առանձին դէպքեր, բնաւորութեան առանձնութիւններ ևայլն, կտմ թէ գիել, եթէ հեղինակի տօն է, նորա մի հեղինակութեան բովանդակութիւնը, կամ թէ նոյն օրի նշանակութեանը յացմար մի օրեւիցէ ուրեմն գործ պատրաստել։ Ուսուցիչները հնարաւոր ջանքեր են գործ դնում աշակեցաններին յօժարեցնելու ալսպիտ մի աշխառառ-

թիւն սկսելու, օգնումէն նոցա նկրթերի ընտրութեան մէջ, կարգաւորումէն աշխատութիւնը ևայլն։ Այսպիսի պատրաստութիւնը շարունակվումէ քանի մի ամիս։ Նըրեմն դաս վերջացնելուց առաջ դասուցիչները քանի մի ըրպէ նուիրումէն աշակերտների ժողոված կամ մշակած նկարի քննութեանը, որով նոցա հետաքրքրութիւնն աւելի է զօրանում և սկսվումէ նախանձաւորութիւնը։ Պատրաստութիւններին յաճախ մասնակցումէն աշակերտների ծնօղներն եւ, օգնելով իրանց մանուկներին յահճն առած գործը յաջողաբար կատարելու։

Այսպէս անցեալ 1884 թ. Վաշինգտոն քաղաքի շատ դպրոցներում տօնեցին Ֆրանկլինի ծննդի օրը։ Աշակերտների աշխատութիւնները մի տեսակ փոքրիկ աշխարհահանդէս էին ներկայացնում։ Աշակերտներից ոմանք հիանալի ճարպիկութեամբ գրումէին գրատախտակների վերսա ծրագիրներ, որոնց բովանդակութիւնը Ֆրանկլինի կեանքից վերցրած զանազան գէալքեր էին, որ միւենոյն ժամանակի համառօտ պատրմումէին։ 7—8 տարեկան տղաներ սովորել էին շնել մոմեր և օճառ ի յիշատակ Ֆրանկլինի սկըզբնական պարապմունքի և իրանց ձեռներով, Մեմերը յետ քաշած մեկնումէին իրանց ընկերներին այս գործի շատ նահապետական եղանակը։ Յետոյ էլէկտրական փորձեր էին անում, որոնք յիշեցնումէին շանթարգել հնացօղի այս մտսին արած առաջին գիտնական փորձերը։ Քանի մի օրերն ամբողջ քաղաքը զբաղած էր Ֆրանկլինով, որով ժողովուրդը նորից մտարերեց իւր մեծ մարդի կեանքը և նորա իմաստուն խորհուրդները համբերութեան, գործու-

Նէութեան, կարգի և ժուժկալութեան մասին:

Միենոյն կերպով տօնվեցաւ Լոնգֆիլօ բանաստեղծի յիշատակը. նորա կեանքին վերաբերված մանրավէպեց, ոտանաւորներ կամ քերանացի էին առում աշակերտներ կամ ձայնանիշներով գրած երգումէին:

Մանուկներին սովորեցնել հայրենիքին և ազգին ծառայած մեծ մարդիկների յիշատակը յարգել և նոցա արժանաւորութիւնների հետ ծանօթացնել — նշանակումէ կրթել աշակերտների մէջ ամենալաւ և ազնիւ զգացմունք, զարգացնել նոցա մէջ յօգուտ հայրենիքի կամ ազգի աշխատելու ցանկութիւնը կարողութեան չափով: . . .

ԺԱՄԱՆԱԿ ՏՆՏԵՍԵԼԸ ՍՈՎՈՐԵՑՆԵԼՈՒ Ե
ՄԱՆԿՈՒԹԵՆԻՑ:

Մանկավարժանոցիս նախընթաց տեսրում Հինգ ըովէում յուղուածը օգտաւէտ ընթերցանութիւն կլինի անշուշտ հայկական դպրոցների վարչութիւնների և ուսուցիչների համար: Մեր դպրոցներում անբաղդաբար ժամանակը չէ գնահատովում. տարիներ անցուցանումեն աշակերտներն ապարդիւնաբար և կանոնաւոր կարդալ անզամ շեն սսվորում, և ընտելանումեն ծուլութեանը՝ և ուրիշ բացասական յատկութիւններին: Հարկաւոր է ժամանակ գնահատել սովորեցնել աշակերտներին, որոնք բոլորովին անուշադիր են իրանց ժամերին: Ժամանակը գնահատել չիմանալուց է, որ աշակերտները շատ անգամ

ժամանակ չեն ունենում այս կամ այն գործ կտրտալու: Հարկաւոր է համոզվել, որ ժամանակի միջոցով ամեն բան կարելի է ձեռք բերել, իսկ կորցրած ժամանակը ոչինչ բանով կարելի չէ ձեռք բերել: Ժամանակը տնտեսելու համար եվլուպացենքը մնջախօս լեզու են ստեղծել, որից օգուտ են քաղում մանաւանդ շատ գրագած մարդիկ: Մնջախօս լեզուի տեղ են գործածվում այցելատոմութեան, որոնք ընդհանրապէս ընդունված և հասկանալի են Եվլուպայի ամեն քաղաքակրթված երկերներում: Այցելատոմութեալը բաւական նշանաւոր դեր են խաղուն հասարակական մասնաւոր կեանքում: Ահա ինչ նշանակութիւն ունին այցելատոմութեան, յատկապէս նոցա անկիւնների ծալքը: Այցելութիւն անելիս տանը շգտնելով այցելելի անձն, այցելատոմութիւնը անկիւնը ծալումէն, ցոյց տալու թէ այցելատոմութիւն անձնական է անձանթ և ոչ թէ ուղարկված է թղթատարով կամ սպասաւորի ձեռով: Բայց ծալած անկիւնը ցոյց է տալիս նոյն ինքն այցելութեան նպատակն ևս, ուստի իմանալու է բոլոր սահմանված կանոնները, որ այցելատոմութիւնը ծալած անկիւնը ինքն բացատրէր այցելութեան նպատակիր: ա) Ծալած ծալս վերին անկիւնը նշանակումէ շնորհակալութեան այցելութիւն: բ) Ծալած ծալս ներքին անկիւնը նշանակութէ ցաւակցութիւն և գէսս մահե, հիւանդութեան և այլն: գ) Ծալած աջ վերին անկիւնը — հրաժարական ողջոնի այցելութիւն: դ) Ծալած աջ ներքին անկիւնը — շնորհաւորութեան այցելութիւն ընտանեկան տօնի կամ բաղդաւորութեան օրը: ե) Այցելատոմութիւնը ծալած ամբողջ ձախ կողմը նշանակու-

մէ պաշտօնական, շնորհաւորական այցելութիւն նոր տարօւն, ծննդին, զատկին ևալին: զ) Այցելատոմսի ծալած ամբողջ աջ կողմը նշանակումէ գործնական այցելութիւն կարեւոր մի գործի համար: է) Երկարութեան մէջ տեղից երկու ծալած այցելատոմսը նշանակումէ հրաւէք այցելօղի մօտ նոյն խոկ օրը: Եւ վերջապէս ը) երկարութեամբ և լայնութեամբ խաչաձե. ծալած և յետոյ բացած հարթած այցելատոմսը նշանակումէ հրաւէք կարեւոր գործի համար հետեւեալ օրը: Այսպէս ուրեմն առանց մի բոսէ կորցնելու միայն այցելատոմսի գանագան մասներ ծալելու միջոցով իրանց ժամերին գին գնող մարդիկ կարողանումեն շատ լաւ հասկացնել միմիանց մտքերը:

ԱՄԷՐԻԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԾԱՌԵՐԻ ՕՐ-Arborday:

Անտառները կենսական նշանակութիւն ունին— մտածողները գիտեն: Ամէրիկայում և տէրութիւնը և հասարակութիւնը աշխատումեն թէ գտնված անտառները պահպանելու և թէ նորերը տնկելու, և այս նպատակով հիմնվեցան «Անտառի պահպանող» անունով բազմաթիւ ընկերութիւններ: Բոլոր անտառապահները ժողով են կազմում և վեճուռումեն գործ դնել զանազան միջոցներ անտառներ պահպանելու և տնկելու համար: Ֆողովի հետաքրքր և օգտաւէտ վճիռներից մին համարելու է պարտաւորական ընդհանուր ժողովքդական տօնի սահմանումն, որ կոչված է «Ծառերի օր» (Arborday):

Այդ օրը բոլոր Միացեալ Նահանգների բոլոր դպրոցների աշակերտներն ազատվումեն դասերից և երանց ուսուցիչների, դաստիարակների, պրօֆէսօրների առաջնորդութեամբ գնումեն նշանակված տեղեր և ամբողջ օր պարագրումեն ծառեր տընկելով։ Հայուել են, որ իւրաքանչիւր ամէրիկացին, իւր դպրոցական ուսման միջոցին, 1000 ծառ է տնկում զանագան տեսակ, նայելով նահանգի կեմային և հողի պայմաններին։ Այսակս չ ոք աշխատելով ամէրիկացի ճառաշնչը հարստացնումէն երանց հայրենիքը քանի մի միլիարդ ծառերով։ Երանի Ամէրիկային, որ գետէ իւր զաւակներին իւր ազգի և հայրենիքի բարերազդութեան համար կըթել. . . .

Կալիֆորնիայի նախկին ոսկէհանքերն այժմ հիանալի, ծաղկաւէտ պարտէզներ են դարձած, 100—300 դէսիատին տարածութեամբ, որտեղ իւրաքանչիւր ծառը և թուփը մարդի ձեռով է տնկված և ինամված։ Ամէրիկացիներն ոչ միայն ընդարձակ անտառներ ունին, այլևս սիրումեն անտառներ, և այդ սիրը զարգացնումէ նոցա մէջ անդադար ամեն տաքի աշխատութեամբ տօնվող «Ծառերի օրը —Աըթօրդէ»։

ՖՐԱՆՍԻԱՑԻ ՍԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱԿՈՐՈՒԹԵԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ԵԼԻՒՄՏԱ.8098:

Ամեն տաքի ազգային լուսաւորութեան ելեմտացոյցը հետաքրքիր անդեկութիւններ է հազորզում։

Ֆրանսիայի ուսուցիչները ելևմտացոյցի առաջադիմութեանը միսիմարովթեամբ են նայում, մանաւանդ որ այս խնդիրը գեռ ևս վերջացած չէ համարվում։ Որովհետեւ ուսուցիչները գեռ ևս իրանց անձնական բաւարարութիւնն չեն ստացել։ Նոքա միսիմարվումեն տեսնելով թէ ֆրանսական ազգը ինչ գոհաբերութիւններ է յանձն առնում իւր զաւակներին կրթելու համար և առանց անհամբերութեամբ յուսուհատելու, նոքա յուսացած են, որ մերձաւոր ապագայում նոցա նիւթական դրութիւնն ևս պիտի ապահովվի:

Ազգային լրաւառօրութեան նախարարութեան ելևմտացոյցը, որը կախսերութեան վերջին տարին 24 միլիոնի էր հասնում, ներկայ 1885 թուին 133 միլիոն է, 109 միլիոն աւելանալով, որ ահագին գումար է։ Այժմ ֆրանսիայում ուսումն ձրի և պարագաներական է։ Այս ուղղութեան առաջին քայլն էր 1879 թ. օգոստոսի 9 օրէնքը, որ պատուիրումէ իւրաքանչիւր նահանգում հիմնել մին արական և մին իգական մանկավարժանոց (ուսուցչական գըպոց), 1881 թ. յունիսի 16 օրէնքը ձրի ուսումն սահմանեց, 1882 թ. մարտի 26 օրէնքը սահմանեց, որ ուսումն պարտաւորական լինի, այսինքն 7 տարեկան մանուկներն ունեցող բոլոր ծնօդները պարագաներ են իրանց զաւակներին ուսումն տալ, ապա թէ ոչ—տուգանք կվճարեն։ Այնուհետեւ հրատարակեցան զանագան օրէնքներ, հրամաններ, կանոններ, հրահանգներ հիմնելու պիւղական դալոցներ, բարձր սկզբնական դպրոցներ, մանկական դպրոցներ, ձեռագործի դպրոցներ, և այլն...

Արական մանկավարժանոցների: Մանկավարժանոցների հեմնաբլութիւնն առաջադիմութիւն առաջին գործ եղաւ, որին պիտի հետևէին միասները: 1879 թ. մանկավարժանոցների թիւը 78 էր, 3600 աշակերտներով: Ազսօր նոցա թիւը 85 է, մոտ 6000 աշակերտներով: Առաջադիմութիւնն աւելի զգալի էր մանաւանդ իգական մանկավարժանոցների վերաբերմամբ: 1877 թ. նոցա թիւը միայն 17 էր, այժմ նոցա թիւը 56 է և շատ շուտ կրացվին 17 մանկավարժանոցներն եւ, որոնք այժմ կառուցանվումեն: 1877 թուի 700 չաշակերտուհիներն այժմ դարձել են 2500: Ծախսերը բնականաբար աւելացել են, մանկավարժանոցների ձրի վճելու և աշակերտների թիւը աւելանալու պատճառով: Մանկավարժանոցների տարեկան ծախսն աւելացաւ 1884 թ. 735,000 ֆրանկով, և այժմ 1 միլիոն 142,000 ֆրանկ է, միևնույն ժամանակ 1 միլիոն 500,000 ֆրանկ ծախսվեցաւ շինութիւնների և կարգուսարքի վերաբերա:

Տեսչութիւն: Սկզբնական դպրոցների համար սահմանված է 2 միլիոն 150,000 ֆրանկ ծախս: Աչքի (Փարեզի) նահանգի տեսչուները 15 են և 452 տեսչուներ նշանակված են մնացած նահանգների համար: Մանկական դպրոցների համար սահմանված է 1881 թ. առանձին տեսչութիւն, որը բաղկացած է 9 ընդհանուր տեսչուհիներից, 4 մասնագիտ տեսչուհիներից և 15 նահանգական տեսչուհիներից: Սկզբնական դպրոցների թիւը 70,000 է, և նոցաընդհանուր տեսչուները միայն 8 են, մինչդեռ մանկական դպրոցների թիւը 5380 է, 679,000 մա-

նումներով։ Աւստի ընդհանուր տեսչուհիների թիւը
իջեցրին 4-ի։ Աակայն մանկական դպրոցներն ան-
շուշտ առանձին տեսչութիւն պիտի ունենան և այս
տեսչութիւնը բնականաբար պիտի յանձնվի կա-
նանց, իսկ տեսուչներն, որոնց յանձնվումէ այժմ
նոցա հսկողութիւնը, տեսչուհիների թիւը սահմա-
փակելուց յետոյ, արդէն իսկ չափազանց ծանրա-
բեռնված են և դժուար թէ կարօղանան տեսչու-
հիների պէս հսկողութիւն ունենալ։

Նպաստներ սկզբնական դպրոցներին։ Տէրութեան
նպաստները սկզբնական դպրոցներին շատ մեծ
քանակութեամբ են լինում։ Տզաների սկզբնական
դպրոցների և խառն դպրոցների վերա ծախսվումէ
20 միլիոն ֆրանկ։ Ազգային ժողովում Պոլ Բէուը
առաջարկեց տարեկան 5 միլիոն աւելացնել ուսու-
ցիչների ոռջիկներ բարեփոխելու, բայց ֆայլիքունա-
խարաբը հնարաւոր չհամարեց այս առաջարկու-
թիւն ընդունել։ Բայց և այնպէս 1 միլիոն 150,000
ֆրանկ օրոշվեցաւ յատկացնել դսլոցական ծախ-
սերին ուսուցիչներին ոռջիկներ բաշւոքելու համար։
Վերջապէս յիշելու է Տէրութեան որոշած 14 միլիոն
նպաստը սկզբնական ձրի կրթութիւնն աւելի յա-
ջողութեամբ կարգադրելու համար։

Ակստեղ նշանակված են առաւել նշանաւոր ծախ-
սերը, որոնք միլիոններով են համարված։ Կան
ուրիշ ծախսեր ևս, որոնք նոյնչափ մեծաքանակ
չեն, բայց նոցա ամբողջ գումարը 4 կամ 5 միլի-
ոնի է հասնում։ Օրինակ 50,000 մարմնամարդու-

թեան համար, 40,000 ֆրանկ երգեցողութեան և
նկարչութեան համար, 150,000 ֆրանկ աշխարհա-
գոռութեան ուսումն առաւել տարածելու համար,
30,000 ֆրանկ գիտնական գործեքների համար
և այլն։

Թէ Ֆրանսիան որքան է ծախսում միայն իւր սկզբ-
բնական ուսման վերա, անկատկած շատ հետաքրքիր
խնդիրներից մին է հետազոտելու։ Աւ սորա համար,
բաւարան չէ իմանալ միայն թէ որքան է տալիս
Տէրութիւնը, հապա ինկատ առնելու է հասարա-
կութիւնների և նահանգների ընծայաբերութիւն-
ների և լ։

Հետեւեալ ցուցակներից կարելի է սմանալ թէ որ-
քան է վճարում Տէրութիւնը և որքան հասարա-
կութիւնները։

1870 թ.	1884 թ.
Նուէրներ և կտակած- ներ . . .	, 688,000.
Հասորակութիւնների վը- չար 16,127,143.	, 26,887,283.
Ընտանիքների վճար (ուս- ման վարձ). 19,169,476.	, 0
Նահանգների վճար 4,944,319.	, 14,992,700.
Տէրութեան վճար. 8,751,700.	, 94,258,575.
<hr/>	
Ընդամենն 50,992,638	Մասնաւոր ծախսեր ծօռ 4,500,000.
	<hr/>
	Ընդամենն 141,306,498.

Ուրիշն, առելացնումէ ազգային ժողովի դեկուցա-

բար պ. Դիւրօսուը, Հասարակական մէ միտքն սկզբ-
րնական ուսման ծախսերն Ֆրանսիայում աստի-
ճանաբար տեղացել են 14 տարիներում 50,992,638
ֆրանկից մինչև 141,306,498 ֆրանկ ալտինքն ա-
ւելացածն է 90 միլիոն 313,860 ֆրանկ. Անկառ-
կածելի է, որ այս գումարը դեռևս իրականութե-
նից ստոր է, որովհետեւ սորանում չկան ոռջիկներ
աւելացնելու ծախսեր, մասնաւոր դասընթացների
ծախսեր, և այն և այլն, որ արել են հասարա-
կութիւնները և յատկապէս յայտնի մեծ քաղաք-
ները.

Այս գումարներից յետոյ հեշտ է իմանալ թէ Բնչ
է արժուած Ֆրանսիայում իւրաքանչիւր մանուկը,
յաճախելով սկզբնական դպրոցը: 1870 թ. միջին
ծախսն իւրաքանչիւր մանուկի համար 12 ֆրանկ
36 սանտիմ էր, իսկ 1884 թ. նոյն ծախսը 26 ֆրանկ,
66 սանտիմ էր: Ծախսերի այս յատկումն դպրոցների
և ուսուցիչների թուի բազմանալու հետևանք է:
Աշակերտների թուի աւելանալն աննշան ազգեցու-
թիւն ունի ծախսերի վերա:

Թէպէտ ոմանք քննադատումեն Տէրութեան ա-
րած սկզբնական կրթութեան համար այս մեծա-
քանակ ծախսերը, սակայն Տէրութիւնը ուշք չէ դար-
ձնում այնպիսի անհեռատիս քննելուներին, քաջ Ճա-
նաչելով, որ ազգի և աէրութեան ամենաթանկա-
գին և անբռնաբարելի հարստութիւնը և զօրու-
թիւնը նորա ժողովրդի ուսումն և կրթութիւն են:
Դպրոցի և ուսման համար գործադրած մեծամեծ
ծախսերով Ֆրանսիան սկսումէ Եվրօպայում առաջ-
նակարգ տեղ բոնիլ, և ուրիշ սողոկներն սկսումէն:

այժո՞ Ֆրանսիային Հետեւ, մինչդեռ 10—15 տարի առաջ Ֆրանսիան գրեթէ լեռ մնացած տէրութիւն էօ Համարզում մանկավարժութեան վերաբերմամբ:

Հայ ուսուցիչները կարգալով այս տեղեկութիւնները կարող են համոզվել, որ մարդկութիւնը առաջադիմումէ և սրով և մտքով միանալ մարդկութեանը, աշխարհը անչորդաբար աշխարհը սովորելով:

ԽՄԲԱԳԻՐԱԿԱՆ ՑԵՇԱՏԱԿԱՐԱՆ:

Ապրիլ 21-ին Արարատեան Մայր Աթոռի Ս. Էջմիածնի տաճարում 30 հոգևորական և աշխարհական պատգամաւորների ժողովում ամենայն Հայերի կաթողիկոսացուներ ընտրվեցան Սրբազն Մելքիսեդեկ Արքեպիսկոպոսը 30 ձայնով և Սրբազն Մակար Արքեպիսկոպոսը 16 ձայնով, որոնք առաջարկվեցան ի հաստատութիւն Ծագաւոր Կայսեր:

Կ. Պոլսի նորընտիր Պատրիարքն Ամենապատիւ Յարութիւն Արքեսլ. Վեհապետեանը մեծ հանդէսով և հայազն ժողովրդի խորին համակրական ցուցերով ժամանեց Կ. Պոլիս և ուխուելով Հայաստանի եկեղեց ցոն, աղքին և սահման սղութեանը հաւատարիմ ծառայութիւնը, սկսեց վարել իւր Պատրիարքական վեհ պաշտօնը: Ամենապատիւ Յարութիւն նորընտիր Պատրիարքից ազգը մեծամեծ յոյսեր ունի, ինկատի ունելով նորա խելացի, ուսումնասիր և խստաբարոյ բնաւորութիւնը:

Վեկտօք Հիւգօ այժմ 83 տարեկան է: Այս տարի
պիտի հրատարակվի նորա հեղինակութիւնների նոր
տպագրութեան առաջին հատուրը, որը տպագրու-
թեան ներկայզարդացման արդարեւ հրաշալիք պի-
տի համարվի: Ամբողջ հրատարակութիւնը 40 հա-
տոր կլինի, Խրաքանչիւր հատորը 5 տեսքից, 80—
100 երեսով, պատկերներով և նկարներով, Գիդօն
տպարանում, ամենընտեր թղթի վերա: Խրաքա-
չիւր տեսքը 6 ֆրանկ կարժենալ, իսկ հեղինա-
կութեան ամբողջ օրինակը 1200 ֆրանկ: Նկարները
պիտի գերազանցեն մինչև այժմ տեսնվածը: Վ.
Հիւգօի 4 պատկեր, 250 մեծ և 2500 փոքր նկար-
ներ կլինին: Բոլոր տպագրութեան ծախսը կլինի
2 միլիոն 500,000 ֆրանկ, սորտնեց նկարների վե-
րա կծախսվի 1 միլիոն 500,000 ֆրանկ: Ուրիշ
արգելքներին չհանդիպելու համար կազմվեցու
բաժանորդական ընկերութիւն, որը հրատարակու-
թիւնը պիտի վերջացնէ առ. 1887 թ. համաշխարհա-
կան արուեստահանդէսն: Այսպէս զիտեն՝ Փրան-
սացիները յարգել իրանց մեծ և անուանի մասե-
նագերներին:

Լօնդոնում աճրդով ծախվեցաւ առաջին անգամ
տպված աստուածաշունչերից մին 30,000 մանէթով:
Biblia Sacra Vulgata (Մանց, 1450—1455): Այս
օրերումն նոյնտեղ ծախվեցաւ միւս հռչակաւոր գիր-
քը 49,000 մանէթով, արս վերնագրով: Psalmorum
Codex, latine cum Hymnis oratione Domenica,
Symbolis et notis musicis. Folio. Mognutiae
1449. Fust et Schaeffer.

Ֆրանսական Սէն—Փիւտ քաղաքում բնակումէ Փիրօ անունով աչքի կին, որը ծնվել է մարտ ամստամ 1761 թուն և այժմ 124 տարեկան է, բոլորովին առողջ և ախորդակով ուտօղ, պակասումէ միայն լիշողութիւնը։ Փիրօն բնակումէ Ա. Փիւտ քաղաքի ծայրում մի խրճիթում և վայելումէ բնակիչների ընդհանուր համակրութիւնը, որոնք պարձենումէն, որ նոցա մէջ է ապրում «աշխարհի ամենահասակաւոր կինը»։

Ամէրեկական Չեկագօ քաղաքի Westen (Ուխտըն) լսաքրի խօսքով այստեղ ապրումէ մի ոմն Զօն Լօնզ, որը ծնվել է 1739 թ. և այժմ 145 տարեկան է, Երեկ ստաշխարհի ամենածեր տղամարդէ։ Այժմ այս զարմանալի ծերունին պահպանէ Չեկագօի հնագիտական թանգարանում և միայն տուսակ ունեցող այցելուներին ցոյց են տալիս նորան։

Բուալական Ֆրանչենսխա քաղաքի մի հերթանոցում սպասաւորումէր Սլլվիօ Հօջալդի, որին իւր հիանալի գեղեցիկութեամբ «աշխարհի գեղեցկագուն» էնն համարաւմ մերձաւորները։ Նոյն հիւրանոց էնկառ ամէրեկացի յատնի հարուստը Շալդը իւր աղջկան հետ, որը միակ ժառանգուհի էք ահագին հարրատութեան։ Ազգին աղքատ երխտասարդին տեսնելուն պէս սիրահարեցաւ և սպառնալով հօրը թէ ինքներան կսպանէ, եթէ հայրը մթոյլատրէ նորան Սլլվիօի շետ պսակվելու, համոզեց և պսակվեցաւ—միաւորելով հարսութիւնը գեղեցկութեան հետ։

Նիւ—Օռէկանի ազուեստահանդէսում կար 83 տարեկան—նեզքին—Եղիա Ռւբոին պատկանած անզրավաբաիկը, որը այժմ 200 կտորներ և կարկասանքներ կարած ունի. Նախնի նեւթից մնացել է միայն մե փոքրիկ կտոր 1 $\frac{1}{2}$ մատնաշափի: Ռւբու ասումէ, որ 43 տարի է ինչ որ հագել է այն անդրավագարիկը ամեն օր կըելով: Այն օրեց մօտ 1000 կտոր և կարկասանք կարվել է և քանդվել է վերակցութեա (White) տմենելին չէր համաձայնում այս եւս գանձը հանելու, բայց համոզեցին թէ սոքանով նա կնպաստէ աղքալին ձեռնարկութեանը:

Նիւ-Խորկում սկսեց հրատարակվել Թաշկինակ (Packet Landkerchief) լրագերը բամբակեայ գործուածի վերա, թաշկինակի մեծութեամբ, և կարդաւուց յետոյ լինումէ խսկանէս թաշկինակ քեջը մաքրելու: Մուրը ոչ ուեանցնումէ և ոչ հոս ունի: Թաշկինակ լրագրի տարեկան գինը (365 համացների) 25%" աւելի աղժան է քան թէ նոյն կտորեց նոյնշափ մաքուր թաշկինակնելը:

Մի ոճն Վելհէմ Գրօս Վէննայում ձեռնարկումէ հրատարակել նոր լրագիր, որի անունը՝ դեռ չէ գրաւել, խսկ թոյլտուութեանը և փողը արդէն պատրաստ են: Նոր լրագրում այն յօղուածները միայն պիտի հրատարակվին, որոնք չեն ընդունվել հրատարակելուուրից լրագերներում և ամսագիրներում:

Ամէքէկական լրագերներից մին հրատարակեց ամենօցեայ լրագերների թղթակեցների համար դաստիարակութեան մասին:

պատուիրաններ, որոնք կարեւոր են ուրիշ երկրների թղթակիցներին ևս, Սոքա են.

ա. Խրաքանչիւր տեղեկութիւն անմիջապէս հազարգել, որովհետև ինչ որ գործվելու կամ ձեռնարկվելու ժամին նորութիւն է, մի ժամից յևսոյ արդէն չին նորութիւն կլինի:

բ. Հաղորդել լոկ վաստ. համառօտ, առանց ամենայն եղբակացութիւնների և զատողութիւնների:

գ. Շաբազգել պարզ, գրել որոշ, մանաւանդ անուններ, ազգանուններ և թուեր:

դ. Նըրէք չգրել երէկ, ալսօր, վաղիս, այլ նշանակել որ և թիւ:

ե. Գործածել աւելի վերջակէտ քան ստորակէտ, բայց չմոռանալ թէ մին և թէ միւսը:

զ. Նըրէք չուղղել անձիշտ գրված բառեր և թուեր, այլ ջնջել անձիշտ գրվածը և նորեց գըել:

է. Գրել միայն թղթի մի երեսի վերա, միւս երեսը ազատ թողնելով: Սորանով գրվածը կարելի է մասների բաժանել և զանազան գրաշարներին յանձնել, որով աւելի շուտ կլատարվի տպարանական գործը:

ը. Միշտ ստորագրել յօդուածը: Սա սկայման է հրապարակախօսական ազնուութեան, հաւաստիութեան և քաջութեան: Խթրագրութիւնն արդէն ինքն գետէ թէ երբ պէտքէ հրատարակել և երբ ծածկել ձեր ազգանունը:

թ. Կարդալ միշտ գրածը և ուղարկել խմբագրութեանն այն ժամանակ միայն, երբ գրածովն ինքն հեղինակը գոհ կլինի:

ժ. Հաղորդած տեղեկութիւնների մէջ եղիս ան-

ալայման կերպով ազնիւ և անկատելի կերպով
ջշմարտախօս, լիշելով որ քեզ լսումէ և հաւատու-
մէ բոլոր քո ազգը և եթէ նորան կխաբեն և կծա-
խես—նու ինքն կդատապացտէ քեզ:

Հայկական սպաթբերպթերթերի Թղթակիցները
երեխ կցանկանացին երբէք չիմանալ մանաւանդ
այս վերջին 10 սպատուիրանը: Որովհետեւ հայ թըդ-
թակցի համար մեծ մասամբ, նոյն և խմբագիրների
համար ազնուութիւնը, ջշմարտախօսութիւնը դա-
տարկ, աննշան խօսքեր են, նոցս համար առաջին
և վերջին սպատուիրանն է անձնական կերք և
անձնական լաբարերութիւն:

Կ. Պօլսի Փունչ լրագրի խօսքով, պաշտօնական
տեղեկութիւնների համաձայն, 1884 թ. Թիւրքիա-
յում հրատարակվել է 441 գիրք: Առանձից 113
գիրք թիւրքերէն, 64—հայերէն, 56—յունարէն, 5
—բօլգարերէն, 1—Փրանսերէն, 1—անգլիերէն և 1
—եբրայեցերէն: Ամբողջ Թիւրքիայում անցեալ
տարի հրատարակումէին 105 լրագիր և ամսագիր,
որոնցից 32—թիւրքերէն, 22—արաբերէն, 21—հա-
յերէն, 12—յունարէն, 10—Փրանսերէն, 2—իտա-
լերէն, 2—եբրայեցերէն, 1—բօլգարերէն և 1—
անգլիերէն:

Անցեալ 1884 թ. հրատարակութեցաւ կովկասեան
ուսումնական նահանդի հոգաբարձուի հաշիւ: Հա-
շուից երեսումէ, որ արական գիմնազիոններ 7 և պրո-
գիմնազիոններ 4 էին, ծախսվել է 531,000 մանէթ:
Պաշտօնեաներ 236 են եղել, սոցանից 132 ուսու-

ցիշներ, մանկավարժական խորհուրդների թիւը 648, աշակերտներ 3,567 են եղել Անդրկովկասի բնակչութեր 4 մելիօն 13,0000 համարելով, 1664 բնակչութեր 1 աշակերտ։ Նոյն տարի ուսումն աւարտել են 133 աշակերտ, արձակվել են 514, պատժվել են 265, մեռել են 11 աշակերտ։ 5 գիմնազիոններ գիտեսօթիկ աշակերտներ ևս ունին, որոնց թիւը 644 է։ Բէալական ուսումնարաններ 6 են, ծախսվել է 316,000 մ., 80 ուսուցիչներ, 2,256 աշակերտներ, (գիտերօթիկներ—487 են), արձակվել են տարվան ընթացքում 392։ Օրեորդական գիմնազիոններ 7 են, պրոֆիլմնազիոններ—9, 3,405 աշակերտուհիներ, ծախսվել է 207,000 ման։ Ուսումն աւարտել են 209 աշակերտուհին, ուսուցչուհիներ 150, ուսուցիչներ—139։ Հինգ մանկավարժանոցներում կան 405 աշակերտներ, և 27 քաղաքային դպրոցներում կան 4,630 աշակերտ, 60 ուսուցիչներ։ Ակդրեական դպրոցներ 1045 են, 56,006 աշակերտներով և աշակերտուհիներով։ Մասնաւոր դպրոցներ 102 են, 265 ուսուցիչներով և 3973 աշակերտներով։ Հոգաբարձուին չենթարկվօք դպրոցներ, մաշմետական և երրայական դպրոցներով, 3,240 են 108,375 աշակերտներով և 2606 ուսուցիչներով, որոնցից 500 կանայք են։

Ներքին գործերի նախարարութեան վիճակագրական յանձնաժողովը հրատարակեց տեղեկութիւններ գիւղական սկզբնական դպրոցների մասին եվրոպական Ռուսիայի 50 և Լեհաստանի 10 նահանգներում։ Ռուսիայում կան ընդամենն 22,770 գիւղական սկզբնական դպրոցներ, 1 մելիօն 140,915

աշակերտաներով (904,916 տղաներ և 235,997 օրի-
որդներ), և 36,955 ուսուցիչներով (սոցանից 12,566
հոգևորականներ, 19,511 ուսուցիչներ և 4676 ու-
սուցչուհիներ): Տասն դպրոցական նահանգների է
ռաժանված տէրութիւնը, բացի Կովկասից.—Պէտէր-
քուրգի նահանգ—1,517 դպրոցներով, Մօսկվայի—
3,919 դպրոցներով, Խարկովի—2,219 դպրոցներով,
Կիևի—3,635 դպրոցներով, Օդէսայի—1365 դպրոց
ներով, Կազանի—2535 դպրոցներով, Օրէնբուրգի
—1236 դպրոցներով, Վիլնայի—1514 դպրոցնե-
րով, Դոբռատի—2460 դպրոցներով և Վարչա-
պայի—2287 դպրոցներով.

Այս 1885 թ. յունվարից սկսվեցաւ Անէրիկայի
Նիւ—Իօրի քաղաքում միջազգային լսագիր հրա-
տարակվել եվրոպական 12 գլխաւոր լեզուներով:
Գլխաւոր լեզուների թուում՝ կան ուսերէն և լե-
չերէն ևս:

Զանագան լեզուներ սովորելու համար հարկաւոր
է բաւական շատ ժամանակ և աշխատութիւն գործ
գնել: Կովկասի և Ղրիմի Հայերը մանկութենից գրե-
թէ երեք լեզու են խօսում: Հայերէն, վրացերէն և
թեւքերէն (Թեֆլոնում), կամ հայերէն, թեւքե-
րէն և ուսերէն (Ղրիմում), թէպէտ գերմանացի
Կարլ Ֆօխտը ասումէ, որ մանուկը մի երկրորդ լե-
զու սովորել ալիսի չափսէ 12 ամեայ կամ 13 ամեայ
հասակից առաջ: Բայց Ֆօխտի խօսքը քերականորէն
ուսումնական է վերաբերվում: Վաղուց մար-
դիկ մտածութիւն մի ընդհանուր լեզու գտնել, որը

ամենքին հասկանալի և ծանօթ լինի, բայց մակրենի լեզուից։ Աշխակայութեան այս երազն այժմ իրականութիւն է դարձել։ Ընդհանուր լեզուն կայ այժմ, ունի իւր քերականութիւն, իւր բառարան, իւր ամսագիր, իւր ուսուցիչներ, իւր աշակերաներ։ Այս նոր լեզուի հնարօղը Նիկէր պատօքն է զվիցէրացի Աէննայում։ Ընդհանուր լեզուն ասվումէ ընդհանուր լեզուով Volapük (Վոլապուկ)։ Ինչ որ լատիներէնը գիտնականների համար, ֆրանսերէնը գիւանագէտների համար է, վոլապուկը նոյն կլինի արուեստուորները, վաճառականների, ճանապարհորդների, ամենքի համար։

Վոլապուկը չափազանց պարզ լեզու լինելով ընդունակ է, ասումեն, մարդկային ամենայն միտք արտայայտելու բանաւոր կամ զբաւոր կերպով։ Վոլապուկի բառարանը մինչև այսօր 2762 բառ ունի, որ քանի մի ամսում կարելի է սովորել։ Քերականութեան կանոններ սովորելու բաւական է քանի մի օր միայն։ բառերը գրվումեն ինչպէս որ արտասանվումեն։ Բացառութիւններ չկան։ ոչ նախպէսներ, ոչ օկու, ոչ հոլովմունք, ոչ խոնաշչմունք։ Բոլոր անունները միակերպ են հոլովվում և բոլոր բայերը միակերպ են խոնաշչում։

Աքուն քանի մի միջ քաղաքներում կան ուսուցչներ, որոնք ուսուցանումեն Վոլապուկ, որի քերականութիւնն աշուկն երբորդ տակագլութիւն ունի։ Նոյն Նիկէրը հրատարակումէ Վոլապուկով մի ամսագիր, որտեղ տպվումեն բազմաթիւ առեւտրական ճանապահներից։ Երես մեր ոնթերցօղներից շատերը այս տողերը կիարդան

Նազրավի ժպիտով և ուսեր բարձրացնելով։ Բայց
թէ սկզբում օտարութիւն և անիրագործելի համար-
ված քանի երեսոյթներ մարդկային կեանքին չար-
մարութիւններ ընձեռող շատ օգտաւէտ իրականու-
թիւններ են դարձել....

Պաշտօնական տեղեկութիւններից յատնի է, թէ
Կովկասում որքան ընդարձակ տեղերում տնկված
են այգիները, որոնք բռնած ունին 100,000 գետեա-
տին տեղ և տարեկան արդիւնաբերվութէ 11 միլիոն
կուժ գինի։ Ահագին հարստութիւն, եթէ քրինաւոր
կերպով գործադրել իմանան։ Անբաղդաբար երի և
շատ ծօտակալ ապագայում մեր այգիները Եվրո-
պացիների ձեռք կանցնեն, և մեր այգեստէրերը
դատարկ կմնան....

Վերջին մի դարի ընթացքում 12 կանոյք գանա-
դան համալսարաններում ստացել են դօկտօրի գիտ-
նական աստիճան։ Առաջինն Շլէօցէր հոչակաւոր
պատմաբանի դուստր էր, որ Հէյդելբէրգի համալսա-
րանում փելխսովիայութեան դօկտօրի աստիճան ստա-
ցաւ 17 տարեկան հասակում։ Խրկըորդը Զիրուտ
էր, որ 1817թ. Հէսսէնում բժշկականութեան դօկտօրի
աստիճան ստացաւ։ Նելայի ստացաւ բժշկակա-
նութեան դօկտօրի աստիճան 1877 թ. Յիւրիխում,
Պէյման—1883 թ. Բէռնում, Պատունի—1884 Բոլո-
նիայում։ Տ. Պօչ քանի մի տարի առաջ Տուրինում
իրաւագիտութեան դօկտօրի աստիճան ստացաւ և
փաստաբան դարձաւ։ 1874 թ. Փիլխսովիայութեան
դօկտօր դարձաւ ու Կովալէվսկայէ և այժմ Ռուբ-

սալի Համալսարանում մատէմատիկայի պրօֆէսօր է, վերջապէս նոյն Համալսարանում 1883 թ. տ. Ֆրի նշանաւոր հետազօտութիւն կարդաց թագաւորի ներկայութեամբ Շվեյչիայի և Հոլլանդիայի գիւանագիտական յարաբերութիւնների մասին, Կարոլոս Փ.ի օրով:

Յայտնի է, որ Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ եղած վերջին սատերազմից յետոյ, Ալգաս և Լոռէն ֆրանսական նահանգները Գերմանիան ձերակալեց: Այդ նահանգներում առ 1 ապրիլի անցեալ 1884 թ. կային 2690 սկզբնական դպրոցներ, 232,245 երկուու աշակերտներով, սոցանից Լոռէնում կային 1125 դպրոցներ, 63410 երկսեռ աշակերտներով: Նոյն սկզբնական դպրոցների ուսուցիչների թիւն էր 2472 (17 հոգեւորականներ) և 2046 ուսուցչուհեներ (1,331 հոգեւորականներ): Այս 2690 դպրոցներից 2232 դպրոցներ կամ օչիկական, 258 դպրոցներ աւետարանական են, 34 դպրոց անխափի դաւանութեամբ և 66 դպրոց երրակական են: Երբակական դպրոցներում սովորումնեն 2,661 աշակերտ: Ալգաս — Լոռէնում կային 106 սկզբնական մասնաւոր դպրոցներ, 6589 աշակերտներով, որոնց ուսուցանումին 58 ուսուցիչներ (45 աշխարհականներ) և 129 ուսուցչուհիներ (85 հոգեւորականներ): Ալլեւ Ալգաս — Լոռէնում կան 7 բարձր սկզբնական դպրոցներ 895 աշակերտներով և 39 ուսուցիչներով, նոյնպէս և 128 դպրոցներ 2665 երիտասարդների համար, որոնց դասախոսումնեն 168 ուսուցիչներ և 5 ուսուցչուհիներ (2 հոգեւորական):

Յնորհակալութեամբ ստոցանք և կարդացենք
մեծ. պ. Ս. Վարչաժեանի հեղինակութիւն Ներսէս
Պատրիարքի ընտրութիւնն ի կաթողիկոսութիւն.
Կյուսայինք, որ պ. Վարչաժեանը բաւական մեծ
աշխատութիւն կրեցվ, հետաքօքեր գէպքերի նը-
կարագրութիւններով հարստացած աւելի նշանա-
ւոր գործ պիտի հրատարակէր... Տպագրական սիալ-
ներն ևս բաւական չառ են:

Յնորհակալութեամբ ստոցանք «Խճով են ապրում
մարդիկը», հրատարակութիւն Մ. Հ. Ռ. Գ. Ո՛թքան
հաւանելի է նիսվը, նոյնքան մեզ անհաւանելի է
գործարած գաւառական բայցառը. Խճի հայ
մանուկը դատապարտված պիտի լինի «կուրդիչն,
նիսվայ, շալվար, նինքս, ջոկի, հօ՛ա, ժաժ, զար-
պանկումէ, խաթի, քամար, ղիշեկան, խուճուճ,
եարագ, բոխչն, հաշո, եալլա, օչորք, օչաշ, լը-
հէր, կազան եախչս» և այլն և այլն բարբարոս քա-
ռեցը սովորելու...

Պ. Յ. Յ. գրումէ մեզ հետեւալ տողելի Վաշար-
յապատից: «Յնորհակալութեամբ ստոցայ Մանաւու-
ծանոցի ուստրները: Քանի գնումէ, այնքան հետաքըր-
քը է զանում ձեր հանդէսը: Ես կարծումեմ թէ Մանաւուծանոցը վերին աստիճանին օգտաւէս պար-
բերաթերթ է ոչ միայն ուսուցիների, այլև ամէն
լուսամիտ ծնողների համար: Եթէ ուզիզ է, որ զատ-
ափառակութեան մեծ գործի մէջ մեծ գերը, ան-
մոխարինելի գերը ծնողներին է, Մանաւուծանոցը ոչ
միայն հաղուագիւտ բան է, այլև անգին: Աւզիզն

ասուծ, ես նորից կարգացի բոլոր համաշխաներն և հասայ այն եզրակացութեանը, որ Մանկավորժութեանը պէտքէ ստանայ նա, ով նախանձախնդիր է ազգակին լուսաւորութեան, որի հիմն լսելացի կերպով մասարդ սերունդ կըթելն է:

«Իմ համակրութեանս յայտնելու համար, խնդրում եմ իմ հաշուով մի օրինակ (1885 թ.) ուղարկէք Գանձակի հոգեոր գալրոցի համաց, այն դպրոցի, ուր ես ստացել եմ սկզբնական ուսումն: Եթէ համեմատենք (եթէ Հնար լինի համեմատութեան) այն անկանոնութիւնը, մեքենայականութիւնը, որոնք 67—68 թուականներում Գանձակի հոգեոր գալրոցի սխտէմն էին անուանում, ձեր քարոզած ժանկավարժութեան հետ, կազելի է կարծել թէ ես սովորել եմ այն XIV—XV դարերում, երբ Վեկուէֆ և Նան Հուս աշխատումէին խորտակել այն մտքերն և եղանակը, որոնք կաշկանդումէին մարդի հայեացքը և բժամտացնում:»

Ամբողջ տարի աշխատելով, կյուսալինք թէ հայ ուսուցիչները կսթափին վերջապէս աններելի անտարեերութենից գէպի իրանց պաշտօնը, թէ նոքա ամբողջ տարի ստանալով Մանկավարժանոցը, կազմալով նորա կենսական և օգտական յօդուածները, զմբռնելով նորա գեղեցիկ ուղղութիւնը, կըզարթին, կենդանութեան որեւէցի նշաններ ցոյց կտան, կխմբովին Մանկավարժանոցի շուրջ, կյօժարէն սորան իրանց թարգման և քերան շինել, և ստ հայ ուսուցիչները սիրելի գքքովկ կդառնամ.... Բոլորսովին դուք եղան մեր լոյսերը: Հայ ուսուցիչները, սակաւելի բացառութեամբ, նոյն անբանեմաց

անառարկելըութիւն և անհոգութիւն շարունակեցին ցոյց տալ առ Մանկավարժանոցը, ինչ որ ցոյց էն տուել միւս ամեն հայ մանկավարժական պարբերաթերթերին, օրոնք և դադարեցին հետպհետական ուսուցիչների չբաժանածանողագրվելու պատճառով, Հայ ուսուցիչներն ընթերցանութեան ճաշակ շունենալով և անընթերցանութեան մինելով, շարունակումնեն իրանց բարոյական և մտաւոր պաշարը բամբասանքներով և զրախօսութիւններով լի լրագրական լուրեր համարել և նոցանով միայն զարգանալ: Խոկ երբ որ մի հոգաբարձու կամ մի տեսուչ արդար և իրաւ խօսքով կյիշեցնէ նոցա իրանց պաշտօնի պարտքերը, և երբ իրանց վիրաւորված կհամարեն, այնուհետև կոխտեն իրանք ևս ամենայն անխղճմութեամբ բամբասանքներով և զրախօսութեամբ լի թղթակցութիւններ հրատաշակել: Ամեն դպրոցանութեան հայ շատ և շատ պիտի ցաւէ, որ հայ ուսուցիչները չնն կամենում մանկավարժորէն զարգանալ, մանկավարժական խնդիրներ ուսումնասիրելով, մանկավարժական պարբերաթերթերը ընթերցասիրելով, և այսպէս մեր դպրոցների թշուառ դրութեան պատճառ են զառնում...

Խորին և անկեղծ ցաւակցութեամբ իմացանք բագուի պատուական Տ. Թաղէսո ա. քահ. Բուղաղեանի մահը, օրն իւր ընտիր բարեմասնութիւններով հայ քահանաների մէջ հազուագիւտ անձն էր: Մանկավարժանոցի խմբագրողը քաղցրութեամբ կիշէ միշտ երջանկայիշատակ Տէր Թաղէսոին, վայելած լինելով նորա անմոռանալի բարեկամութիւնը: Ազնուագոյն ծաղկիներով թող ծածկիլ Տէր Թաղէսո ա. քահ. Բուղաղեանի գերեզմանը:

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

Ա. Չ. Բ. Ի. Ի. Ռ.

Պատկերազարդ ամսագիր Երեխաները և դաստիարակները
համոր: Տարեկան գի՞նն է 3 ման: Հասցէն: Տիֆլիս: Ռեդակցիա „Ացբյօրք“.

Խմբագիր-Հրատ: Տ. Նորդարեամեն:

Ա. Ռ Զ Ա. Գ Ա. Ն Ք

Քաղաքական—զբականական շաբաթաթերթ: Տարեկան
թէ՞նը 5 ս: Հասցէն: Տիֆլիս: Ռեդ. „Արձագանք“:
Խմբագիր-Հրատարակիչ Ա. Յովհաննիսեան:

Ա. Ր Ե Ւ Ե Լ Ք

Օրագիր քաղաքական և ազգային: Տարեկան գի՞նն է
56 ֆրանկ, կես տարվան 28 ֆրանկ: Հասցէն: Կ. Պոլիս:
Դարմթիա, Նորառունկեան խան:

Ա. Ր Ե Ւ Ե Լ Ե Վ Ա Ն Մ Ա Մ Ո Ւ Լ

Ամսագիր հրատարակիումէ Զմիւռնայում: Տարեկան գի՞նն
է 4 մէջիտիէ արծաթ: Խմբագիր-անորէն Ա. Մամուրեան:
Թուարքնակ Հայեր կարօղ են բաժանորդ գովիճակ: Շահվեր-
դեանի լազարական գողծակալութեան մէջոցով Թիֆլիսում:

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ

Պատկերազարդ հրատարակութիւն ամիսը Երկու անունու:
Տարեկան գի՞նն է 4 ռ. Հրատարակումէ Պոլում:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

1885 թ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ ամսագիրը հրատարակվումէ գլխառորդապէս մանկավարժական ուղղութեամբ: Խրաքանչիւր երկամսեալ մի տետրը երկու թերթեց է: Յուղիս — օգոստոս ամիսներ չի հրատարակվի:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑԻ տարեկան գինն է 3 մանէլը:
Ստորագրվածները յատկապէս պիտի դիմեն ալո
հասցէով. Ախալցիք. Ռեդակցի Մանկավարժանոց:

Խմբագրող — Հրատարակող Խնոմին Ռ. Վ.Ա.Բ. ԱՏԵՓԱՆՆԻ:

Համակեղեսնական Պրօգրամներ — Ծրագիրներ (առաջին փորձ) աշակերտական կանոններով և դաստիարակների համար հրահանգներով, Խորչն ու Վարդ. Ստեփանէի աշխատութեամբ յօրինած, Խառնվումն Թէֆլիսում Կեղեսնական Գրավաճառանոցում (Центральный Книжный магазинъ) և Զաքարեանի վկասեան Կ Գրավաճառանոցում (Кавказская Книжная торговля. З. Григорова), Գրքութեամն է 50 լ.

Дозволено ценз. Тифлисъ, 8 мая 1885 г.

Типографія М. Каламкарова, Алея, ул. д. № 2.